Հայ գրականություն, Վիպակ, Արձակ
13+

Նար-Դոս
Նունե

Հայոց կյանքից

Ա
Ամառվա կիրակնային այն գեղեցիկ երեկոներից մեկն էր, երբ ամեն մարդ, օրվա անտանելի տոթից ստիպված՝ տանը փակված մնալուց հետո, դուրս է գալիս մի փոքր ազատ օդ շնչելու:

Արևն արդեն մայր էր մտել:

Թիֆլիսի գեղեցկաշեն տներից մեկի պատշգամբում, որ նայում էր դեպի մի մեծ փողոց, զբոսնում էր մի օրիորդ: Նրան տասնևյոթ տարեկանից ավելի չէր կարելի համարել, եթե նրա հասակն այդ տարիքին անհամեմատ բարձր չլիներ: Նա ուներ կատարյալ գեղեցկության բոլոր նշանները, բայց նրա փոքր-ինչ նիհար և գունատ դեմքից, որի վերա մի տեսակ մելամաղձոտ արտահայտություն կար, իսկույն կարելի էր գուշակել, որ մի ինչ-որ հոգեկան ցավ մաշում էր նրա քնքուշ կանացի սիրտը: Իսկ նրա քայլվածքը, դեմքի գրավիչ գծագրությունը և համեստ, բայց խիստ խելոք, թափանցող հայացքը նայողի վերա մի անբացատրելի ազդեցություն էին անում:

Ձեռքերը կցած և գլուխը կոր՝ նա ծանր քայլերով ման էր գալիս պատշգամբում: Երևում էր, որ նա ընկղմված էր խոր մտածության մեջ և, կարծես նա ամենևին չէր լսում ներքևը— փողոցում անցուդարձ անող խումբ-խումբ մարդկանց ձայներն ու կառքերի դղրդոցը: Նա կանգնեց պատշգամբի երկաթե բարակ սյուներից մեկի մոտ, յուր գեղեցիկ գլուխը հենեց նրան և մեծ ու սևորակ աչքերը ձգեց հեռուն՝ դեպի մայրմտած արևից շառագունած հորիզոնը: Դեռ երկար ժամանակ և բոլորովին անշարժ, որպես արձան, նա անթարթ դիտում էր հեռուն, կարծես կամենալով թափանցել, տեսնել, թե ի՞նչ է կատարվում այնտեղ՝ հորիզոնի մյուս կողմը, երբ հանկարծ արտասուքի երկու խոշոր կաթիլներ դուրս ցայտեցին նրա աչքերից, նրա գունատված այտերի վերայով ցած գլորվեցին, միևնույն ժամանակ նրա կրծքից դուրս թռավ մի շատ նվազ սրտամաշ հառաչանք, նա ձյունի նման սպիտակ թաշկինակը մոտեցրեց աչքերին և կամաց նստեց այնտեղ դրված աթոռի վերա: Արտասուքը խեղդում էր նրան, բայց նա զսպում էր իրեն:

«Դժվա՛ր է, դժվա՛ր...»,— վերջապես շշնջաց նա, և արտասուքը առվի նման դուրս ցայտեց նրա աչքերից: Նա թաշկինակը ամուր սեղմեց աչքերին, և երկար ժամանակ դեռ լսվում էր նրա զսպված, խուլ հեկեկանքը: նա մոռացել էր անգամ, որ փողոցում յուր վերա ուշադրություն դարձնողներ կարող էին լինել: Վերջապես նա սրբեց արտասուքը, մի փոքր հանգստացավ և, յուր գեղեցիկ գլուխը ձեռքերին հենելով, դարձյալ ընկղմեցավ խոր մտածության մեջ:

Այդ միջոցին հանկարծ բացվեցավ պատշգամբի դուռը, և շեմքի վերա մի հաստափոր մարդ երևաց: Դա մոտ հիսուն տարեկան, միջին հասակով, կարճ բեղերով ու մազերով մի մարդ էր: Մի ինչ-որ խստություն և անգթություն նշմարվում էր նրա սուր հայացքի մեջ: Նրա լիքը կարմիր թշերը ցույց էին տալիս, որ ջրի տեղ նրան ծառայում էր կախեթու «գլուխ գինին», իսկ նրա դուրս ընկած հաստ փորը կարծես ասում էր. «Գիտե՞ք, պարոններ, թե որքան անմեղների ու աղքատ գյուղացիների քրտինքի ու արտասուքի գնով եմ ես այսպես հաստացել»... Շոգն ստիպել էր նրան արձակելու յուր սև-ատլաս արխալուղի կոճակները, որի տակից երևում էր նրա սպիտակ, օսլայած շապիկը: Նրա ուռած աչքերից երևում էր, որ խաղաղ և կուշտ քնից նոր էր արթնացել:

Սա օրիորդի հայրը՝ աղա Յագոր Բուղդանիչն էր:

— Դու էստի ի՞ս, Նինո,— ասաց նա դանդաղությամբ հորանջելով: Օրիորդը, որը նրա հայտնվելը չէր լսել, հանկարծ այդ ձայնի վերա սթափվեց և իսկույն ևեթ վեր կացավ տեղից:

— Այո, հայրիկ,— ասաց նա շատ նվազ ձայնով և երեսը դարձրեց դեպի փողոց, որպեսզի հայրը չտեսնե, թե լաց էր եղեր:

— Ինչի՞ դեդիդ հետ չգնացիր բաղը ման գալու,— հարցրեց աղա Յագոր Բուղդանիչը ծանր և բառերը պարզ ու որոշ արտասանելով, ինչպես այդ հատուկ է առհասարակ թիֆլիսեցի վաճառականական դասակարգին:— Հիմի Էնդի մուզիկ կուլի ածում... մե քիչ բոլթա կուտայիք ու յիդ կուգայիք:

— Չկամեցա, հայրիկ...

— Հա՛... դո՛ւն գիդիս, վուրթի,— երկարացրեց հաստափորը:— Ամա էտ մեկը լավ չիս անում, ուր դեդիդ հակառակում իս,— ավելացրեց նա պատշգամբից ներքև փողոցը նայելուց հետո,— էնքան խնդրից, աղաչից, դու քունն արիր ու չգնացիր:

— Հայրի՛կ, դուք գիտեք, որ ես հիվանդ եմ... գլուխս ցավում է... և, բացի այդ, ես զբոսնել առհասարակ շատ չեմ սիրում,— արդարացնում էր իրեն օրիորդը:

— Հա՛: Էտ նրամեն է, վուր դու ջեր մտետ չիս գցի էն...— Աղա Յագոր Բուղդանիչը չվերջացրեց յուր ասելիքն և հանկարծ խոսքը փոխեց,— վուր դու իս կարթում ու օթախեմեդ վո՛ւխչ օրն իսկի չես դուրս գալի... Շատ կարթալը, վուրթի, լավ չէ... աճկերուտ էլ վնաս է:

Օրիորդը ոչինչ չպատասխանեց, նա հեռացավ պատշգամբի մյուս ծայրը, իսկ աղա Յագոր Բուղդանիչը մեջքը դեպի աղջիկը դարձնելով, ծանրությամբ նստեց աթոռի վերա, նրա ծանրությունից ճռճռաց աթոռը:

— Էս ի՞նչ չիխլիպիտո սկամիք գիդին ես վուխտը,— մրթմրթաց նա և բոլորովին անհոգ կերպով սկսեց շվշվացնել մի ինչ-որ եղանակ, որին հետևեց վրացերեն «Գամո, մզեո, գամիգոնեն» ցած ձայնով: Այդ ժամանակ օրիորդը մի խիստ սառ հայացք ձգեց նրա վերա և սկսեց նայել ներքևը փողոցում խռնվող ամբոխին:

— Ի՛փրիմե,— հանկարծ երգն ընդհատելով՝ կանչեց աղա Յագոր Բուղդանիչը:

Իմերել ծառան իսկույն հայտնվեցավ պատշգամբի վերա:

— Ռա՞ գնեբամթ, բատոնո (ի՞նչ եք կամենում, պարոն),— թափեց նա միմյանց վերա բառերը,

— Ղվինո (գինի):

Իմերելը չքացավ և մի քանի րոպեից հետո երևաց ձեռքին մի մեծ արծաթյա բաժակով, որ թափվելու չափ լցրած էր մուգ-կարմիր գինով: Աղա Յագոր Բուղդանիչը առավ բաժակը նրա ձեռքից, և մինչև կեսը մի շնչով խմելուց հետո, «Օխա՛յ» շունչ քաշեց ու սրբեց բեղերը, թեև ոչինչ չկար նրանց վերա: Նա երկրորդ անգամ բաժակը մոտեցրեց շրթունքներին և հենց կամենում էր մնացած գինին էլ ծծել, երբ հանկարծ նրա հետևից լսվեց մի սաստիկ ճիչ և վայր ընկնելու մի խուլ ձայն: Առանց բաժակը ձեռքից թողնելու, նա շուռ եկավ հետևը և յուր աղջկան անշնչացած պատշգամբի վերա տարածված տեսավ:

Նրա գինին «հառամ էլավ»:

Բ

Վերոհիշյալ անցքից անցել էր երեք օր: Գիշեր էր. հեղեղանման անձրևը թափվում էր վերևից, երբեմն-երբեմն որոտի սարսափելի թնդյունները խլացնում էին անձրևի շփշփոցը:

Չ... թաղի եռահարկ տներից մեկի ներքին հարկի փոքրիկ և խոնավ սենյակներից, կամ ավելի լավ ասած, խուցերից մինում, սեղանի վերա շուրջն աղոտ լույս տարածելով՝ վառվում էր մի փոքրիկ լամպա, նրա ծխից սևացած ապակին կոտրված էր, և կոտրվածը թղթով կպցրած: Ցերեկը այդ խուցը լուսավորվում էր մի ոչ այնքան մեծ լուսամուտով, որի կեսն էր միայն փողոցից վեր գտնվում: Լուսամուտի առաջ դրված էր սեղանը, որի վերա խառնիխուռն միմյանց վերա թափված էին գրքեր, թղթեր, լրագրի մի քանի համարներ, հացի փշրտանք, գրիչ, թանաքաման և ուրիշ բաներ, իսկ սեղանի առաջ դրված էր մի հին մահճակալ յուր հին անկողնով, որ միևնույն ժամանակ ամբողջ սենյակի մեջ և աթոռի տեղ էր ծառայում: Սենյակում այլևս ուրիշ ոչինչ չէր երևում, բացի մի ինչ-որ հին վերարկուից, որ կախված էր պատից մեկ անճոռնի ձեռնափայտից, որ դրված էր անկյունում: Պատերը սաստիկ խոնավ էին, որից և սենյակում մի տեսակ ծանր օդ էր փռված:

Մահճակալի վերա արմունկները չոր տախտակին հենած և գլուխը ձեռքերի մեջ բռնած, նստել էր մոտ քսաներեք տարեկան մի երիտասարդ: Չնայելով խիստ չքավորության, որ յուր հետքերը շատ պարզ կերպով թողել էր նրա վերա, նա տակավին պահպանել էր յուր առաջվա գեղեցկության մի նշանավոր մասը — աչքերը, որոնք այդ րոպեին խիստ մտածությամբ բևեռած էին առջևը դրված մի ինչ-որ տետրակի վերա և որոնք պարզ կերպով արտահայտում էին նրա հաստատակամությունն ու խելքը: Իսկ նրա լայն ճակատը, որի վերա դառնության կնճիռներ էին երևում, պսակված էր երկար և սև ետ սանրված մազերով:

Երկար ժամանակ և բոլորովին անշարժ՝ նա նստած էր նույն դրության մեջ: Ինչպես երևում էր, նա նստել էր մի բան գրելու, բայց կամ չէր կարողանում մտքերը կարգավորել, կամ նրա միտքը թռել, դեգերում էր հեռավոր կամ մոտիկ տխուր անցյալի մեջ, որը, գուցե, այժմ անցնում էր նրա չռած աչքերի առաջով, ինչպես մի ֆանտաստիկական երևույթ, որը, երբեմն, մինչև անգամ ամբողջ ժամերով զբաղեցնում է մարդուս բոլոր ուշքն ու միտքը: Մի խոսքով, նա գտնվում էր արթուն քնի մեջ, նա ոչ անձրևի շփշփոցն էր լսում և ոչ որոտի ականջ խլացնող թնդյունները:

Մինչդեռ նա գտնվում էր այդ դրության մեջ, ոք-մին կամաց բախեց դուռը. բայց նա այդ չլսեց: Անցավ մի րոպե, դռան հարվածը կրկնվեցավ. նա դարձյալ չլսեց: Բայց երրորդ անգամ, երբ արդեն առաջվանից ավելի պինդ բախեցին, նա բարձրացրեց գլուխը և նայեց սենյակի անկյուններից մեկին.

— «Դարձյալ մկները»,— շշնջաց նա և կրկին ընկղմեցավ յուր մտքերի մեջ: Չորրորդ անգամ դուռը ծեծեցին և այս անգամ բավական պինդ. նա դարձյալ գլուխը բարձրացրեց և այս անգամ տեսավ, որ սխալվել է՝ թխկթխկոցը մկներին վերագրելով:

— Ո՞վ է,— կանչեց նա մի փոքր խռպոտ ձայնով:

Դրսից ոչ ոք չպատասխանեց, բայց դարձյալ ծեծեցին դուռը:

«Զարմանալի է,— մտածեց նա,— ո՞վ պիտի լինի այս կեսգիշերին ինձ մոտ եկողը»:

Նա վեր կացավ և ուզում էր գնալ դուռը բանալու, բայց հանկարծ կանգ առավ. «Չլինի՞ թե գող է»,— շշնջաց նա կամաց՝ լայն բացած աչքերը դռանը հառելով: «Ախ, միևնույն է այժմ ինձ համար»,— հանկարծ կանչեց նա մի տեսակ դառնությամբ և վազեց դեպի դուռը: Դուռը բանալուն պես՝ երկու ձեռքերը փաթաթվեցան նրա վզովը, և կանացի շատ նվազ մի ձայն շշնջաց նրա ականջին.

— Գրիգո՛ր, ես եմ...

— Նունե՛...— բացականչեց իսկույն իրեն գրեթե մոռացած երիտասարդը և սեղմեց նրան յուր սաստիկ բաբախող սրտին.— Նունե՛... Նունե՛, մի՞թե այս դու ես... մի՞թե այս իրականություն է...

Գ

Գրիգոր Սեյրանյանը գյուղի հարուստ բնակիչներից մեկի որդին էր: Փոքր հասակում ավարտելով գյուղական ուսումնարանը, նա ծնողների համաձայնությամբ գնացել էր Թիֆլիս՝ այնտեղի ուսումնարաններից մեկում յուր ուսումը շարունակելու համար: Թիֆլիսում նա բնակվում էր յուր հորեղբոր այրի կնոջ մոտ, որ յուր չքավորության պատճառով ընդունել էր նրան իբրև մի հասույթավոր, և նրա ամեն պետքերը հոգալու համար ամսական բավական մեծ փող էր ստանում: Թիֆլիս գալու առաջին տարին Սեյրանյանը մեծ հաջողությամբ պատրաստվելով մասնավոր ուսուցչի մոտ, մտել էր գիմնազիոնի երկրորդ դասատունը: Նա շատ աշխատասեր էր և ամեն տարի փոխում էր դասատունը:

Սկզբի մի քանի տարիները նա մեծ դժվարությամբ կարողացավ յուր հորեղբոր այրի կնոջ ընտանիքում ապրել, որովհետև բացի այն, որ նրանք միասին ապրում էին միևնույն և այն էլ մի շատ փոքրիկ սենյակում, նա ստիպված էր պարապելու յուր հորեղբոր չար երեխաների ականջ խլացնող գոռում-գոչյունների մեջ, մյուս կողմից էլ, յուր հորեղբոր այրի կինը շատ վատ էր պահում նրան՝ չնայելով որ լրիվ ստանում էր յուր ամսականը: Սեյրանյանը մտածեց, որ այդ ամսականով կարելի էր մի գեղեցիկ առանձին սենյակ վարձել և հանգիստ ապրել: Նա նամակով խնդրեց այդ մասին յուր ծնողներին, ցույց տալով նրանց այն պատճառները, որոնք ստիպում են նրան թողնելու այդ ընտանիքը: Ծնողները չափից դուրս սիրում էին իրենց միակ զավակին, ուստի և սիրով համաձայնեցան նրա հետ: Սեյրանյանը անմիջապես ամսական հինգ ռուբլով վարձեց յուր համար մի առանձին սենյակ մի գեղեցկաշեն տան մեջ, որտեղ կային և ուրիշ շատ բնակիչներ: Ծնողներից նա միանգամից հարյուր ռուբլի փող ստացավ, յուր համար շորեր և սենյակի կայք գնելու համար: Նա շատ պարզ, բայց մաքուր կերպով զարդարեց յուր ուսանողական փոքրիկ սենյակը և այնուհետև բոլորովին հանգիստ ու ավելի մեծ եռանդով սկսեց պարապել դասերով: Հայրը ամիսը մի երկու անգամ այցելում էր յուր սիրելի որդուն և ամեն անգամ նրան խրատներ էր տալիս: Ի դեպ է ասել, որ Սեյրանյանը, չնայելով որ հինգերորդ տարին էր ինչ Թիֆլիսումն էր, բայց այնուամենայնիվ նա դարձյալ պահպանել էր յուր գյուղական պարզությունն ու համեստությունը: Բացի այդ, նա ի բնե ծանր բնավորության տեր, խելացի և միանգամայն շատ բարի ու ազնիվ տղա էր: Նրան բոլորովին ծանոթ չէին Թիֆլիսի սովորող երիտասարդների մեծ մասի զվարճություններն ու ցոփակեցությունը: Նա խորշում էր այդպիսիներից: Ընկերները նրան միշտ ծաղրում էին ասելով, որ նա «էշ գյուղացի» է: Բայց Սեյրանյանը ուշադրություն չէր դարձնում նրանց վերա: Թեյը խմելուց հետո նա առավոտյան ժամը յոթ անց կեսին գնում էր գիմնազիոն: Մի անգամ առավոտյան, սենյակի դուռը փակելուց հետո, երբ նա կամենում էր բակի դռներից դուրս գալ, տեսավ, որ վերին հարկի պատշգամբի սանդուղքներից, մի քանի տետրակ ձեռքին, իջնում էր մի օրիորդ — դա մեզ ծանոթ աղա Յագոր Բուղդանիչի միակ աղջիկ Նունեն էր, որ նոր ավարտած լինելով տեղական հայ օրիորդական ուսումնարաններից մեկը, այժմ նույն ուսումնարանում ստորին դասարանում վարժուհու պաշտոն էր վարում: Այստեղ նկատենք փակագծերում, որ տունը, որտեղ բնակվում էր Սեյրանյանը, պատկանում էր աղա Յագոր Բուղդանիչին:— Նրանց հայացքները հանկարծ հանդիպեցան միմյանց, և Սեյրանյանն ինքն էլ չհասկացավ, թե ինչի՞ նույն վայրկյանին յուր ամբողջ մարմնի միջով մի ինչ-որ սարսուռ անցավ: Նա առհասարակ սովորություն չուներ երկար-բարակ դիտելու գեղեցիկ սեռին և այդ պատճառով, շտապով դուրս գնալով փողոց, գրեթե վազեց դեպի գիմնազիոն:

Այդ առաջին անգամն էր, որ նա տեսնում էր օրիորդին և, չնայելով, որ վայրկենապես միայն նայեցավ նրա վերա, բայց օրիորդի պատկերն այնպես էր դրոշմվել նրա ուղեղի վերա, որ բոլոր դասերի ժամանակ օրիորդը չէր հեռանում նրա մտքից: Եվ նա չէր հասկանում, թե ինչ էր նշանակում այդ:

Դասերը վերջացնելուց հետո նա շտապեց դեպի տուն: Նա չէր կարողանում ինքն իրեն հաշիվ տալ, թե ինչի՞ ինքն այնպես շտապում է: Հասնելով իրենց փողոցը, նա տեսավ, որ փողոցի մյուս ծայրից գալիս էր Նունեն: Նրանք, գալով հանդիպակաց կողմերից, հենց բակի դռների մոտ հանդիպեցան:

Օր. Նունեի և Սեյրանյանի հայացքները դարձյալ հանդիպեցան միմյանց... Օրիորդը կանգնեց, որպեսզի ճանապարհ տա Սեյրանյանին դռնից ներս մտնելու: Սեյրանյանն էլ նույնն արավ: Ռոպեական շփոթությունից հետո, որի միջոցին նրանք երկուսն էլ սաստիկ կարմրել էին, օրիորդը շուտով ուշքի գալով՝ առաջինը շտապով մտավ բակը: Սեյրանյանը մեքենայաբար հետևեց նրան և տեսավ, թե ինչպես, գրեթե վազելով, օրիորդը բարձրանում էր սանդուղքներով վեր: Նա բացեց յուր սենյակի դուռը և մտավ ներս: Նրա սիրտը սաստիկ բաբախում էր:

Այդ հանդիպումը մեծ ազդեցություն էր արել նրա վերա: Նա այդ օրը ոչինչ չկարողացավ անել, մինչև անգամ մոռացավ ճաշելու գնալ, ինչպես գիմնազիոնից վերադառնալուն պես նա այդ անում էր ամեն օր: Օրիորդի ամոթխած, սիրուն պատկերը մի րոպե անգամ չէր հեռանում նրա աչքի առաջից: «Ի՞նչ եղավ ինձ,— մտածում էր նա անդադար,— մի՞թե սրանք են սիրահարության առաջին նշանները»: Նա ծիծաղեց այս խոսքերի վերա և նստեց պարապելու: Սակայն տողերի տեղ գրքի երեսների վերա նա օրիորդի, միշտ օրիորդի պատկերն էր տեսնում: «Է՛հ, այս անտանելի է»,— կանչեց նա վերջապես և, վերարկուն ուսերի վերա գցելով, դուրս գնաց փողոց՝ ուղեղը մի փոքր հանգստացնելու համար: Նա հանեց ժամացույցը և նայեց. «Վա՛հ, կանչեց նա զարմացած,— արդեն երեկո է... տեր աստված, այս ի՞նչ է եղել ինձ, որ ես չեմ էլ իմանում, թե ինչպես է անցնում ժամանակը»: Նա չկարողացավ զբոսնել, ներսից մի բան դեպի տուն էր մղում նրան: Եվ նա վերադարձավ յուր սենյակը, բոլորովին հոգնածի նման ընկավ մահճակալի վերա և, գլուխը ձեռքերի մեջ սեղմելով, անդադար կրկնում էր. «Ես կխելագարվեմ... ես կխելագարվեմ»...

Շատ վատ անցկացրեց նա գիշերը: Առավոտյան վաղ վեր կենալով, նա տեսավ, որ առանց հանվելու է քնել: Նա դարձյալ ծիծաղեց յուր այդ արտասովոր վարմունքի վերա: «Տեսնենք ինչո՞վ պիտի վերջանա այս հանելուկը»,— ասաց նա և լվացվեցավ: Սառը ջուրը կազդուրեց նրա գրգռված ջղերն, և նա նստեց դասերը սովորելու: Յուր ժամանակին բերին թեյ. նա խմեց հացով և, վերցնելով գրքերը, դուրս գնաց: Նա ակամայից կանգ առավ բակի դռների մոտ, երեկվա տեղում և նայեցավ սանդուղքներին, «նա կիջնե»,— ակամայից շշնջացին նրա շրթունքները: Բայց այս անգամ օրիորդ չկար: «Հիմար եմ»,— ասաց նա և դուրս գնաց:

Այդ օրվանից կարծես մի ծանր քար դրին նրա սրտի վերա: Բոլոր ժամանակ նրա աչքերի առաջ փայլում էր օրիորդ Նունեի համեստ, ամոթխած պատկերը, և երբ մի օր չէր տեսնում նրան, գրեթե լալիս էր նա հուսահատությունից ու վշտից: Նա շատ քիչ էր ուտում. նրա ախորժակը բոլորովին կապվել էր: Դասերով անգամ, որ նրա միակ ամենասիրելի պարապմունքն էին, նա չէր պարապում և այդ պատճառով էլ նա մի քանի անգամ ամոթով մնաց ուսուցչի առաջ:

— Ի՞նչ է պատահել ձեզ, Սեյրանյան,— մի անգամ հարցրեց նրան ուսուցիչը,— ինչպես երևում է դուք այլևս դասեր չեք պատրաստում:

— Հիվանդ եմ, պ. ուսուցիչ,— պատասխանեց Սեյրանյանը՝ իրեն արդարացնելու ուրիշ միջոց չգտնելով:

— Եթե հիվանդ եք, մի՛ գաք դասերին, մինչև որ առողջանաք: Դիմեցեք բժշկին, այդպես չի կարելի թողնել:

Սեյրանյանն այդպես էլ արավ: Նա մոտ մի շաբաթ գիմնազիոն չէր հաճախում և ամբողջ օրերով մնում էր տանը փակված՝ ինքն էլ չիմանալով, թե ինչ է անում:

«Այսպես շարունակել կարելի չէ»,— վերջապես ասաց նա մի անգամ յուր դասերի, դասընկերների և ապագայի մասին մտածելուց հետո:

«Բայց ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ ավելացրեց նա հուսահատությամբ:— «Այս անպիտան զգացմունքն ինձ հանգիստ չի տալիս... ինձ խելագարեցրել է»...

Սակայն բախտը նրան առաջին անգամ ժպտաց, ժպտաց, որպեսզի վերջը նրան ամենասոսկալի թշվառության հասցնե:

Նույն շաբաթ օրը լրանում էր առաջին ամիսը, ինչ նա բնակվում էր աղա Յագոր Բուղդանիչի տանը: Սեյրանյանը պատրաստվեցավ նույն օրն երեկոյան սենյակի վարձը վճարելու՝ եկող ամսվա համար: Աղա Յագոր Բուղդանիչն, ինչպես այժմ առհասարակ սովորություն է դարձած, տան վարձը ամսի գլխից էր առնում:

Մինչև այն օրը նրան բոլորովին չէր հետաքրքրել, թե ո՞վ էր այն աղջիկը, որ իրեն մի հայացքով այնպես կախարդել էր: «Ի՞նչ կլինի, եթե նա տանտիրոջ աղջիկը լինի»...— մտածում էր նա: Նա շտապով հագնվեց, սանրվեց և պատրաստվեցավ գնալու: Սանդուղքներով բարձրանալիս նա զգաց, որ սիրտը սաստիկ բաբախում է, և ծնկները դողում են: Անցնելով մի շարք լուսամուտների առաջով, նա կանգ առավ աղա Յագոր Բուղդանիչի սենյակներից մեկի դռան մոտ, երկչոտությամբ բացեց դուռը և մտավ ներս: Առաջինը նրա աչքին ընկավ Նունեն, որ դեպի փողոց նայող լուսամուտներից մեկի առաջ, բազկաթոռի վերա նստած գիրք էր կարդում: Նրանից մի փոքր հեռու՝ բազմոցի մեջ, թաղված էր նրա մայրը՝ աղա Յագոր Բուղդանիչի կինը, որ մի գեղեցկատեսիլ, վրաց տարազի հագուստով, մոտ երեսունևհինգ տարեկան կին էր: Նա այնքան նման էր յուր աղջկան, որ կարծես մի խնձոր լինեին կես արած: Նա նույնպես մի ինչ-որ գիրք էր կարդում: Սեյրանյանը մտնելուն պես՝ մայր ու աղջիկ դարձան դեպի դուռը:

Սեյրանյանը սաստիկ շփոթված՝ գլխարկը ձեռքին կանգնած մնացել էր դռների մոտ. նա զգաց, որ վատ է և գրեթե վախենալով խոսեց ցածր ձայնով.

— Ներեցեք, տիկին... ես... ես... ձեզ խանգարեցի...

— Ա՛խ, ամենևին ոչ. պ. Սեյրանյան,— շտապեց պատասխանել նրան տանտիկինը սիրալիր ժպիտով և մի տեսակ գրավիչ ձայնով:— Ի՞նչ էիք կամենում... գո՞րծ ունեք:

— Ես... ես տան վարձը բերել եմ, տիկին,— ասաց Սեյրանյանը դարձյալ շփոթված: Այդ րոպեին նա չափից դուրս գեղեցիկ էր: Օր. Նունեն նայեցավ նրան և ամոթից կարմրելով, գլուխը կախեց գրքի վերա:

— Ինչի՞ եք այդպես շտապել,— ասաց տանտիկինը, նույն սիրալիր ժպիտով և մի տեսակ փաղաքուշ հայացքով նայելով Սեյրանյանի ամոթից վայր թողած գեղեցիկ աչքերին:— Բայց ինչի՞ չեք նստում, պ. Սեյրանյան: Համեցեք.— և տանտիկինը ցույց տվեց իրենից մի փոքր-ինչ հեռու մի բազկաթոռ:

Սեյրանյանը մեկ կամենում էր շուտով դուրս գնալ այդտեղից, մեկ էլ մի բան նրան ներսից ստիպում էր մնալու: Մի քանի վայրկյան տատանվելուց հետո վերջապես նա սիրտ առավ և մեքենայաբար նստեց տանտիկնոջ ցույց տված բազկաթոռի վերա: Նա չէր համարձակվում նայելու օր. Նունեին, թեպետև նրա ուշքն ու միտքն ամբողջապես նրա կողմն էին:

— Հա՛, դուք դեռ ծանոթ չե՞ք կարծեմ իմ աղջկանս հետ,— հանկարծ հարցրեց տանտիկինը:

— Ո՛չ, տիկին... դեռ ես... այդ պատիվը չեմ ունեցել,— առավել ևս շփոթվելով պատասխանեց Սեյրանյանը, որի սիրտը սաստիկ արագությամբ սկսեց բաբախել, այնպես որ նա մինչև անգամ ձեռքը սեղմեց կրծքին:

— Ուրեմն խնդրեմ ծանոթանաք:

Սեյրանյանը մեքենայաբար վեր կացավ, օր. Նունեն՝ նույնպես, նրանք մոտեցան միմյանց և չհամարձակվելով միմյանց դեմքին ուղիղ նայելու, սեղմեցին միմյանց ձեռքը և միևնույն ժամանակ երկուսն էլ շշնջացին իրենց անունները: Սեյրանյանն ինքն էլ չհասկացավ, թե ինչի՞ սովորականից ավելի պինդ սեղմեց և ավելի երկար պահեց նրա ձեռքն յուր ձեռքում, միայն նա զգաց, թե ինքն այդ ժամանակ ամբողջապես ցնցվեց: Այնուհետև նրանք դարձյալ բռնեցին իրենց առաջվա տեղերը:

Այդ ժամանակ մտավ ծառան և տանտիկնոջը մի ինչ-որ բանի համար դուրս կանչեց:

— Ներեցեք, պ. Սեյրանյան,— ասաց տանտիկինը տեղից վեր կենալով,— ես իսկույն կգամ... մի քանի րոպե միայն... խոսեցեք առժամանակ միասին... Նունե՛, զբաղվեցեք խոսակցությամբ, ես գալիս եմ այս րոպեիս:

Եվ տանտիկինը, գիրքը սեղանի վերա դնելով, դուրս գնաց սենյակից:

Սեյրանյանի դրությունը վատացավ, նա մնաց մենակ այն օրիորդի հետ, որին ինքը սիրում էր և որի համար զգում էր, որ պատրաստ կլինի ամեն բան. մինչև անգամ կյանքը զոհելու: Նա ոչ ամաչում էր և ոչ վախենում, այլ մի տեսակ խառն, անորոշ դրության մեջ էր. այնպես որ հաշիվ տալ չէր կարողանում իրեն, թե ինչ էր կատարվում յուր մեջ այդ րոպեին, միայն նա զգում էր, որ սիրտը մի ինչ-որ քաղցր բաբախմամբ թրթռում էր յուր կրծքի մեջ. կարծես ուզում էր դուրս պրծնել այնտեղից և ընկնել օրիորդի ոտների տակ: Նա դարձյալ չէր կարողանում ուղիղ նայել օրիորդի դեմքին և աչքերը ման էր ածում անդադար պատերի վերա, Նունեն նստած էր դարձյալ յուր առաջվա տեղը: Նա վայր էր թողել յուր երկար, թուխ թերթերունքները, որոնք մի տեսակ մութ ալիքներով սքողել էին նրա գեղեցիկ սևորակ աչքերը: Նրա սպիտակ այտերի վերա խաղում էր վարդի գույնը, իսկ կուրծքը նկատելի կերպով բարձրանում էր ու ցածրանում, կարծես մի ինչ-որ նրա մեջ էլ կատարվում էր: Նա անողորմ կերպով թերթում էր յուր առաջ դրված գիրքը, կարծես, մի ինչ-որ ջիգր ուներ այդ անբախտ գրքի վերա և ուզում էր հանել: Լռությունը սենյակում տիրել էր: Վերջապես Սեյրանյանը մի անգամ ուղիղ նայեցավ նրան, և կարծես նրա աչքերը մի անգամից գամվեցին նրա դեմքի վերա: Աստված իմ, ո՛րքան գեղեցիկ, ո՛րքան հրաշալի թվաց այդ օրիորդը, որքան համեստ, հեզ և խոնարհ էր նա... նա վեր կացավ ակամայից և անզգայաբար գնաց դեպի նա. կարծես մի ինչ-որ անհայտ զորություն քաշում էր նրան դեպի այդ չքնաղ օրիորդը: Նա հանկարծ կանգ առավ նրանից երկու քայլ հեռու, նա աննկատելի կերպով դողում էր:

— Ի՞նչ եք... կարդում, օրիորդ,— հարցրեց նա գրեթե շշնջալով:

Օրիորդը շփոթվեց և կարծես մոռացավ գրքի անունը, նա շտապով բացեց գրքի երեսը և նայեցավ:

— Ի՞նչ... Հյուգո... «Թշվառներ»,— պատասխանեց նա անկապ կերպով և առանց աչքերը գրքի երեսից հեռացնելու: Սակայն նա շտապով ժողովեց իրեն և նայեցավ Սեյրանյանի դեմքին:

Սեյրանյանը արդեն նույնպես նայում էր նրան:

— «Թշվառնե՞ր»,— կրկնեց վերջապես:

— Այո... Դուք կարդացե՞լ եք:

— Ես... այո... կարդացել եմ:

— Եվ ինչպե՞ս է թվացել ձեզ:

— Ինչպե՞ս... ես այդ... կարդացել եմ «Թշվառները» և... լաց եմ եղել:

Օրիորդը ժպտաց:

— Ես էլ եմ լաց եղել,— ասաց նա:

— Եվ անկարելի է լաց չլինել... ո՞վ կարող է այս կարդալ և լաց չլինել... նրա սիրտը քար պիտի լինի:

— Եվ ո՞վ ձեզ այստեղ ավելի է զգացնել տալիս...

— Ո՞վ... Ժան Վալժանը... իսկ ձե՞զ:

— Մարիուսն ու Կոզետտը,— հանկարծ ակամայից դուրս թռավ Սեյրանյանի բերանից. նա սաստիկ կարմրեց: Նունեն նույնպես կարմրեց և աչքերը վայր թողեց գրքի վերա:

Նույն րոպեին ներս մտավ տանտիկինը: Սեյրանյանը, սենյակի վարձը հանձնելով նրան, կամենում էր դուրս գնալ: Բայց նա խնդրեց նրան թեյին մնալու. Սեյրանյանը սկիզբը հրաժարվեց, բայց հետո մնաց: Նա այլևս ոչ շփոթվում էր և ոչ ամաչում. նա հետզհետե ավելի համարձակություն էր ստանում: Եկավ և աղա Յագոր Բուղդանիչը: Նա շատ սիրով ընդունեց Սեյրանյանին: Նրանք միասին թեյ խմեցին, խոսեցին երկար ժամանակ, վերջը աղա Յագոր Բուղդանիչն առաջարկեց «նարդի» խաղալ, բայց Սեյրանյանը չգիտեր. Նունեն հանձն առավ նրան սովորեցնելու: Սեյրանյանն ամենաքաղցր տպավորության տակ ուշ գիշերը վերադարձավ տուն: Նա պառկեց անկողնում, և նրա քունը դեռ երկար ժամանակ չէր տանում: «Նունե՛, Նունե՛»,— շշնջում էր նա մանկական երջանկությամբ:

Եվ այսպես աղա Յագոր Բուղդանիչի տան դռները բացվեցան նրա առաջ: Ամեն շաբաթ երեկո նրան հրավիրում էին կաթով թեյի և մինչև կեսգիշեր անց էին կացնում խոսակցությամբ կամ «լոտո» և «նարդի» խաղալով: Նունեն և Սեյրանյանը կապվեցան միմյանց հետ այն սերտ բարեկամական կապով, որ տևում է անքակտ մինչև վերջին շունչը: Երբեմն նրանք պարապում էին միասին: Շատ անգամ էլ վիճաբանում էին զանազան հարցերի, երևույթների վերաբերությամբ և նրանց այդ վիճաբանությունը «ուղտի պոչ» չէր դառնում, ինչպես այդ լինում է մեր արդի փոփոխամիտ, տաքարյուն և ոչինչ հաստատ համոզմունք չունեցող երիտասարդների մեջ: Նրանց համոզմունքը, հայացքները կյանքի, առավելապես շրջապատող կյանքի զանազան երևույթների վերա, շատ տարբեր չէին, և այդ պատճառով նրանց վիճաբանությունը միշտ վերջանում էր ընդհանուր համաձայնությամբ: Եվ իհարկե, ինչպես բնական է, Սեյրանյանի սերը հետզհետե բորբոքվում էր դեպի Նունեն, և խոսք չկա, որ այս վերջինս էլ նրան էր սիրում: Նրանք այժմ երբեք չէին շփոթվում միմյանց առաջ. ընդհակառակը, նրանք շատ լուրջ էին պահում իրենց միմյանց մոտ գտնված ժամանակ և մինչև անգամ նրանց վարմունքը մի տեսակ պաշտոնական ձև էր ստացել: Սակայն հենց առաջին օրից նրանք հասկանում էին, որ սիրում են միմյանց, նրանք այդ կարդում էին միմյանց աչքերի, հայացքների մեջ և լռում էին: Նրանք ոչ մի կերպ չէին կարողանում բացարձակապես հայտնել միմյանց այն զգացմունքը, որ նրանք տածում էին փոխադարձաբար: Մի կողմից օրիորդի ծնողներն էին արգելք լինում այդ բանին, մյուս կողմից, որ ամենագլխավորն է, նրանք երկուսն էլ ամաչում էին:

Բայց շատ երկար չտևեց այդ անել դրությունը:

Մի անգամ, կիրակի առավոտյան թեյից հետո, Նունեն ըստ սովորականին մտավ Սեյրանյանի սենյակը: Նա նույն օրվա լրագիրը բերել էր միասին կարդալու համար, ինչպես նա այդ անում էր միշտ: Այդ օրը նա շատ ուրախ տրամադրության մեջ էր. նրա գեղեցիկ դեմքի վրա նկատվում էր մի ինչ-որ երջանիկ ժպիտ: Սեյրանյանը նստած էր սեղանի առաջ քամակը դեպի դուռը և զբաղված էր մի ինչ-որ գրությամբ: Նա այն աստիճան անձնատուր էր եղել դրությանը, որ օր. Նունեի մտնելն անգամ չլսեց: Վերջինս մի րոպե կանգնեց դռների մոտ, հետո տեսնելով որ նա յուր մտնելը չլսեց, և շարունակ գրում է, ոտների մատների վերա կամաց-կամաց մոտեցավ նրան և կանգնելով նրա աթոռի հետևը, ժպտալով սկսեց նայել նրան: Սեյրանյանն առանց ոչինչ իմանալու շարունակում էր գրելը, բայց վերջապես, երևի վերջացնելով՝ բարձրացրեց գլուխը, վայր դրեց գրիչը և հոգոց հանելով վեր կացավ տեղից: Հանկարծ նա շուռ եկավ, և նրա աչքերը հանդիպեցան օր. Նունեի ամենաքաղցրիկ կերպով ժպտացող աչքերին:

— Օրիո՛րդ,— կանչեց նա զարմացած և հանկարծ կարմրեց:

— Բարի լույս ձեզ, պ. Սեյրանյան,— ասաց օր. Նունեն նույն ժպիտով և ձեռքը մեկնելով դեպի նա:

Սեյրանյանն ամուր սեղմեց դեպի իրեն մեկնված ձեռքը:

— Դուք գողի նման եք մտել, օրիորդ,— ասաց նա ինքն էլ ժպտալով:

— Երևի ես ձեզ խանգարեցի... Դուք այնպես ընկղմած էիք ձեր գրության մեջ... Բայց կարելի է տեսնել, թե ինչ էիք գրում.— և օրիորդը ակամայից ձեռքը տետրակին մեկնեց:

— Օ՜, ո՜չ, այդ անկարելի է,— հանկարծ բացականչեց Սեյրանյանը և նախքան օրիորդը ձեռքը կդիպցներ տետրակին նա շտապով վերցրեց այն և պահեց յուր ձեռքերի մեջ:

— Բայց կարելի՞ է իմանալ, ինչի՞ կարելի չէ, - հարցրեց Նունեն բոլորովին չհասկանալով, թե ինչի նա այնպես շփոթվեց տետրակի համար:

— Այս ոչ ոք չպիտի տեսնե...

— Մինչև անգամ և ե՞ս...

Օրիորդը չհասկացավ, թե ինչի՞ այդ բառերն արտասանեց և միանգամայն «ես» բառի վերա շեշտելով. Սեյրանյանն ուղիղ նայելով նրա դեմքին, օրիորդի ժպտող, սիրալիր հայացքը թափանցեց երիտասարդի սրտի խորքը, և նա նորից կարմրելով՝ աչքերը վայր թողեց:

— Մինչև անգամ և... դուք,— շշնջաց նա:

— Իսկ ես կամենում եմ այդ տետրակը տեսնել... Երևի մի որևիցե շարադրություն եք գրում:

— Այո... բայց դուք այդ չեք տեսնիլ... չպիտի տեսնեք այդ...

— Պ. Սեյրանյան, վերջապես խնդրում եմ...

Օրիորդը մի այնպիսի եղանակով արտասանեց այդ բառերը, որ ոչ թե տետրակն, այլ եթե հոգին էլ կամենար, Սեյրանյանը կտար նրան: Նա մեկնեց տետրակը դեպի Նունեն, բայց և իսկույն էլ կամենում էր դարձյալ ետ առնել, օրիորդը շուտով խլեց այն նրա ձեռքից:

— Երևի դուք կարծում եք, որ ես ձեր շարադրությունը չեմ հավանիլ... Դուք գիտեք, որ ես կրիտիկոս չեմ.— այդ խոսքերը ասելով նա նստեց սեղանի մոտ և սկսեց թերթել տետրակը: Սեյրանյանը լուռ և անշարժ կանգնած էր: Սառը քրտինքը դուրս էր ցայտել նրա ճակատի վերա, կարծես նրա մահու դատավճիռը պիտի կարդային:

Օրիորդը լուռ կարդում էր տետրակը: Այդ ժամանակ նա սկսել էր ավելի ու ավելի շառագունել, նրա կուրծքը նկատելի կերպով բարձրանում ու ցածրանում էր, իսկ շրթունքները դողում էին: Հանկարծ տետրակի մի երեսը կիսատ թողնելով նա կարդում էր մյուս երեսը, հետո երրորդը, չորրորդը... վերջապես վերջին երեսի վերջին տողերը կարդալով, նա ծածկեց տետրակը, վեր կացավ աթոռի վերայից, և մոտենալով Սեյրանյանին, որը կանգնած էր յուր առաջվա դրության մեջ, բռնեց նրա ձեռքն ու շշնջաց դողդոջուն ձայնով.

— Այո՜, Գրիգոր, ես քեզ սիրում եմ...

. . . . . .

Անկասկած, ընթերցողն արդեն հասկացավ, թե ինչ էր պարունակում յուր մեջ այն տետրակը: Սեյրանյանն առհասարակ սովորություն ուներ յուրաքանչյուր օրվա պատահարները, յուր ստացած լավ կամ վատ տպավորությունները արձանագրելու այդ տետրակի մեջ: Միևնույն տետրակի մեջ էր և այն բոլորը, ինչ որ վերաբերում էր յուր Նունեի վերա սիրահարվելուն՝ սկսած հենց առաջին օրից մինչև այդ օրը: Մի՜նչև անգամ նա գրում էր թեկուզ հենց ամենաչնչին խոսակցությունը, որ յուրաքանչյուր օր պատահում էր նրա և Նունեի մեջ: Նրա մեջ էր և նույնպես

երեկվա խոսակցությունը բառ առ բառ, իսկ վերջում ավելացրած էր. «Բայց, աստված իմ, մինչև ե՞րբ պիտի այսպես շարունակվի... Մի՞թե ոչ մի ժամանակ ես նրա բերանից չպիտի լսեմ՝ նա ինձ սիրում է, թե ոչ»: Ահա այդ վերջին բառերն էին, որ օրիորդը կարդաց և այլևս չկարողացավ զսպել իրեն, արտասանեց այն երկնային բառերը, որոնց՝ մեծ դժվարությամբ նա կարողացել էր մինչև այդ ժամանակ սանձած պահել յուր մեջ, և որոնք ամեն ժամանակ պատրաստ էին հրաբխի լավայի նման դուրս ժայթքելու: Մի՞թե այլևս հնար կար ծածկելու. և այդ մեծ, սրբազան բառերի հետ նա տվեց նրան յուր սիրտը, յուր հոգին, յուր բոլոր գոյությունը...

Անցավ մի տարի: Սեյրանյանը տակավին բնակվում էր աղա Յագոր Բուղդանիչի տանը: Նրա և օր. Նունեի մեջ եղած հարաբերությունները բոլորովին սերտացել էին: Նրանց սիրո մեջ մի մազաչափ փոփոխություն անգամ չէր պատահել. նրանք ավելի ու ավելի անձնատուր էին լինում իրենց սիրո բուռն զգացմունքներին և կարծում էին, համոզված էին, որ այլևս ոչինչ ույժ նրանց սրտերը բաժանել չի կարող մինչև վերջին շունչը: Շատ անգամ լավ եղանակներին, երեկոները նրանք գնում էին զբոսնելու, իսկ կյուրակի առավոտները գնում էին եկեղեցի կամ մենակ երկուսով, և կամ երբեմն էլ նրանց ուղեկցում էր և՛ օրիորդի նույնչափ պարզամիտ, որքան և բարի մայրը, որ Սեյրանյանին յուր որդու չափ սիրում էր: Սիրահարվածները իրենց այնպես էին պահում, որ օրիորդի ծնողները ո՛չ թե իմանալ, այլ կասկած անգամ տանել չէին կարող, որ նրանք սիրում են միմյանց, մանավանդ Սեյրանյանը, որ հենց սկզբից ճանաչված էր իբրև մի շատ համեստ, ազնիվ ու խելացի երիտասարդ:

Նրանց սիրահարական տեսակցություններն առհասարակ պատահում էին Սեյրանյանի սենյակում: Նրանք սիրում էին միմյանց անկեղծ կամ ինչպես ասում են, սուրբ սիրով: Նրանք ուրիշ ոչինչ չէին կամենում, բայց եթե միայն խոսել միմյանց հետ, զանազան երեխայական կատակներ անել, ծիծաղել, նայել միմյանց աչքերին, ժպտալ միմյանց երեսին և գրկախառնվել: Եվ այդ նրանց համար երկնային երջանկություն էր, որին ուրիշ մի բանի հետ փոխել չէին կարող:

Նույն տարին Սեյրանյանը վերջնական քննություն տվավ գիմնազիոնում և ամենաառաջին ավարտողներից մեկը եղավ:

Այժմ հարկավոր էր հոգ տանել ապագայի մասին: Նա վաղուց արդեն, ուսումը թերի չթողնելու համար, մտադիր էր գնալ Ռուսիա կամ արտասահման ուսումն այնտեղի համալսարաններից մեկում շարունակելու. նա վաղուց մի որոշ նպատակ ուներ ընտրած — այն է՝ բժիշկ դառնալ՝ հայրենիքում գործելու համար: Նա սիրում էր հայրենիքը յուր սրտի սրբազան զգացմունքներով, սիրում էր կոշտ, կոպիտ գյուղացուն, նրա հողը, աշխատանքը, նրան համարում էր յուր հարազատը, յուր արյունակիցը, նրա և նրա քրտնաթոր աշխատանքի մեջ էր տեսնում յուր գոյության հենարանը, հետևաբար նա իրեն պարտավոր էր զգում օգնելու այդ գյուղացուն, օգնելու այնքան, որքան յուր ույժերը կներեին: Շատ անգամ այդ մասին նա խոսում էր Նունեի հետ, որ այդպիսի ժամանակներում ժպտալով ասում էր.

— Այժմ այդպես ես ասում, բայց երբ կերթաս, կտեսնես եվրոպական կյանքը, կմտնես այդ կյանքի մեջ, կծանոթանաս նրա պայմանների, պահանջների հետ և վերջապես կընտելանաս այդ կյանքին, այն ժամանակ ոչ թե այդպես չես խոսի, այլև բոլորովին կմոռանաս գյուղացուն էլ, հայրենիքդ էլ, ինչպես այդ անում են մեր ներկա երիտասարդներից շատերը:

— Լսիր ինձ, Նունե,— պատասխանում էր Սեյրանյանը,— դու կատարյալ իրավունք ունես այդպես խոսելու, որովհետև շատ դեպքեր քեզ տեղիք են տվել այդպես դատելու: Բայց ինչի՞ դու ինձ անպատճառ կամենում ես նմանեցնել քո ասած երիտասարդներին... ինչի՞ դու չես կամենում նախ և առաջ քննել այն շրջապատող կյանքը, հասարակությունը, պայմանները, որոնց մեջ մեծացել են նրանք և ես... իսկ եթե դու քննես, կտեսնես, որ իրավ շատ մեծ տարբերություն կա դրանց մեջ... Ես, իհարկե, ինձ չեմ ուզում գովել կամ արդարացնել, բայց այնուամենայնիվ, դու շատ լավ ճանաչում ես իմ բնավորությունս, բավական ծանոթ ես իմ վարած կյանքին... Եթե Թիֆլիսը, որ այսքան փչացած է, այսքան տարվա մեջ չկարողացավ ինձ փչացնել, փոխել իմ բնավորությունը, ապա հույս ունեմ, որ այլևս ոչինչ եվրոպական կյանք չի կարող ինձ փոխել: Ես քեզ կարող եմ հավատացնել, Նունե, որ չնայելով այսքան տարի հեռացած եմ գյուղից, հայրական օջախից,

ավարտել եմ գիմնազիոնը, լավ, և կարելի է ասել, փառավոր կյանք եմ վարել, բայց այնուամենայնիվ ես այս րոպեիս դարձյալ գյուղացի եմ, իմ երակներիս մեջ վազում է դարձյալ ջանասեր գյուղացու տաք արյունը, և ես ամեն ժամանակ պատրաստ եմ հողը վարելու, դառն քրտինք թափելու, իսկ կալի «հորովելան» ինձ համար ավելի քաղցր է, ավելի մոտ իմ սրտին, քան զանազան սիմֆոնիաներ ու ռոմանսներ...

Այդպիսի խոսակցությունները ո՛րպես դուր էին գալիս Նունեին, ո՛րպիսի անհուն հոգեզմայլությամբ և երջանիկ ժպիտով նա նայում էր այդ ժամանակ Սեյրանյանի լուրջ, խելացի դեմքին:

— Ա՜խ, Գրիգոր,— շշնջում էր նա այդ ժամանակ,— դու քո այդ խոսքերով ակամայից ինձ սիրեցնել ես տալիս գյուղական կյանքը... Այո՛, քաղցր է դա, Գրիգոր... Ինչի՞ ես էլ գեղջկուհի չեմ ծնված... ես էլ կգործեի... քեզ հետ... միասին...

— Այո՛, այո՛, իմ անգի՛ն Նունե, մենք այնտեղ կգործենք միասին— այնտե՛ղ— գյուղի խաղաղության մեջ,— բացականչում էր ոգևորված երիտասարդը և Նունեին յուր հուզված կրծքին սեղմում:

Հուլիս ամիսն էր:

Երեկոյան, երբ արևն արդեն մայր էր մտել, Սեյրանյանը՝ յուր փոքրիկ լուսամուտի առաջ նստած՝ մտքում հազար ու մի նախագծեր էր կազմում յուր ապագայի համար... նա վաղուց արդեն ծնողներից համաձայնություն էր ստացել համալսարան գնալու և այժմ ուրախ էր, երջանիկ, ինչպես մի անմեղ մանկիկ. նրա սիրտը, հոգին, ուղեղը դեռ ծանրաբեռնված չէին կյանքի դառնություններով, և նա այդ դառնությունների մասին մտածել անգամ չէր կամենում: Ինչի՞: Ո՞վ գիտե, գուցե նա կարծում էր, որ մարդուս մի անգամ վիճակված բախտը նրանից այլևս հեռանալ չի կարող, կամ շատ կարելի է նա երկյուղ էր կրում, թե մի գուցե, ստեղծելով յուր առաջ մթին, մռայլ կյանք, թունավորվի յուր անհուն երջանկությունը... Ինչևիցե, բայց ի՞նչ հարկ էր ստեղծելու յուր առաջ մի այդպիսի մթին, մռայլ կյանք, քանի որ տակավին բախտը ժպտում էր նրան...

Դեռ երկար ժամանակ նստած անշարժ՝ նա անձնատուր էր եղել յուր քաղցր ցնորքներին, երբ հանկարծ ներս մտավ տանտիրոջ ծառան և նրան հեռագիր տալով, դուրս գնաց դարձյալ: Սեյրանյանն այդ առաջին անգամն էր, որ հեռագիր էր ստանում, այդ պատճառով նա անհանգստությամբ բացեց հեռագիրը և սկսեց լուռ կարդալ: Հանկարծ նա օձից խայթվածի նման վեր ցատկեց տեղից և, ամբողջ մարմնով դողալով, վայր ընկավ գետին: Հեռագիրը ընկել էր նրա կողքին:

Նունեն յուր սովորության համեմատ այդ միջոցին ներս մտավ սենյակը՝ նրա հետ մի փոքր խոսակցելու. բայց ո՜րքան զարմացավ և միևնույն ժամանակ վախեցավ նա, երբ նրան գետնի վերա անշունչ տարածված տեսավ: Նա իսկույն, խելագարի նման, բռնեց նրան և սկսեց շարժել:

— Գրիգո՜ր, Գրիգո՜ր,— կրկնում էր նա անդադար հուսահատությամբ:

Սեյրանյանը կենդանության մի նշույլ անգամ չէր ցույց տալիս:

Օրիորդը կարծեց թե նա արդեն մեռած է, բայց ինչի՞ց... սարսափից անպատմելի կերպով ցավում, ճմլվում էր նրա սիրտը: Նա դրեց յուր ձեռքը նրա կրծքին,— նա բաբախում էր,— յուր սիրելին տակավի՜ն կենդանի էր... Ուրեմն հույս կար... և նա իսկույն դուրս վազեց սենյակից: Մի րոպեից հետո նա դարձյալ ներս ընկավ՝ մի ինչ-որ սրվակ ձեռքին բռնած: Նա մոտեցրեց սրվակը Սեյրանյանի քթին, և մի րոպեից հետո Գրիգորը բացեց աչքերը... Երբեք Նունեն յուր կյանքի մեջ այնքան չէր ուրախացել, որքան այդ րոպեին, երբ յուր սիրելիի մեռած հայացքը ընկավ յուր դեմքի վերա:

— Գրիգո՛ր,— բացականչեց նա և իսկույն գրկելով նրան՝ օգնեց ոտի կանգնելու: Նա Սեյրանյանին նստեցրեց մահճակալի վերա, ինքն ևս նստելով նրա կողքին,— Գրիգո՛ր, ի՞նչ է պատահել քեզ, — հարցրեց նա՝ ձեռքը նրա ճակատին դնելով:

Սեյրանյանն ապուշի նման նայում էր նրա երեսին:

— Դու ինձ չե՞ս լսում, Գրիգո՛ր, ի՞նչ է պատահել քեզ,— կրկնում էր օրիորդը անհանգստությամբ:

— Ի՞նչ,— վերջապես հարցրեց Սեյրանյանը մի տեսակ մեռած ձայնով:

— Ինչո՞ւ դու ուշաթափվել էիր... Դու հիվա՞նդ ես... Ի՞նչդ է ցավում:

Սեյրանյանը մի փոքր ուշքի եկավ, ըստ երևույթին, նա ոչինչ հիշում: Նա պինդ սեղմեց յուր գլուխը ձեռքերի մեջ: Հանկարծ նրա հայացքն ընկավ հատակի վերա ընկած հեռագրին. նա ուզեց վեր կենալ և վերցնել հեռագիրը, բայց այնքան ույժ չուներ: Նա անխոս, ձեռքով ցույց տվեց հատակի վերա ընկած հեռագիրը: Նունեն բոլորովին զարմացած՝ վերցրեց այն և կարդաց: «Երեկ գիշեր ավազակները մտնելով ձեր տուն՝ ձեր ծնողներին սպանել են և ողջ հարստությունը տարել: Շուտով հասեք»: Սեյրանյանը հենց առաջին խոսքերի վերա ամեն բան հիշեց և անմեղ երեխայի նման հեկեկալով ընկավ բարձի վերա:

Նունեի համար ամեն բան պարզվեց այժմ: Բայց նա զարմացավ, թե ո՞ր անմիտը կամ անգութն էր մի այդպիսի հեռագիր ուղարկել... Մի՞թե կարելի էր մի այդպիսի սոսկալի հեռագիր ուղարկել որդուն... Եվ նա հասկացավ, թե մինչև ո՞ր աստիճան տանջվելիս պիտի լինի յուր սիրելին. չէ՞ որ նրա տանջանքն և յուր տանջանքն էր, և նա լսելով Սեյրանյանի դառնագին հեկեկանքը, զգաց, որ արտասուքը խեղդում է իրեն էլ: Սակայն նա զսպեց իրեն, նա հասկացավ, որ այդ ժամանակ ինքը մի փոքր քաջասիրտ պիտի գտնվեր՝ յուր սիրելիին մխիթարելու համար: Եվ նա սկսեց մխիթարել նրան զանազան քաղցր ու սիրալիր խոսքերով: Բայց Սեյրանյանի կորուստն այնքան մեծ էր, որ նա չկարողացավ նրան հանգստացնել, մանավանդ որ այդ Սեյրանյանի կյանքում առաջին հարվածն էր:

— Ես չեմ կարող ապրել... Ես ո՛րբ եմ,— կրկնում էր նա. անդադար դառն արտասուք թափելով:

— Հանգստացի՛ր, Գրիգոր, հանգստացի՛ր,— սիրտ էր տալիս նրան Նունեն,— դու տակավին որբ չես. ես այստեղ եմ... Եվ ի՞նչ կարող ես անել ճակատագրիդ դեմ... Դու տղամարդ ես, այդպես թուլասիրտ մի լինիլ... Արիացի՛ր, Գրիգորս... արտասուքը միայն կանայք են թափում:

Սեյրանյանն ամաչեց այդ խոսքերից և սրբեց արտասուքը:

— Ահա այդպե՛ս, Գրիգորս... Մի՞թե դու չես հասկանում, որ հուսահատությունը լավ չէ, որ մարդս հուսահատության երբեք անձնատուր չպիտի լինի, ապա թե ոչ նա կորած է... Եվ ինչի՞ դու չես կամենում ճանաչել կյանքը, հաշտվել նրա ձախորդությունների հետ... և ո՞ր մի մահկանացուն ազատ է դրանից: Կռվի՛ր, Գրիգոր, կյանքի ձախորդությունների դեմ, կռվիր անվեհեր, հաստատակամությամբ և հավատացիր, որ հաղթանակը քոնը կլինի...

Եվ օրիորդը նրան ավելի ևս խրախուսելու համար գրկեց նրան ջերմագին:

Այդ իսկ րոպեին սենյակի դուռը բացվեցավ և շեմքի վերա երևաց աղա Յագոր Բուղդանիչի կլոր, հաստ մարմինը: Նա տեսավ, որ յուր աղջիկը գրկած է Սեյրանյանին, և մի րոպե դեռ տեղն ու տեղը մնաց քարացած: Օր. Նունեն հորը տեսնելուն պես՝ մի ճիչ արձակեց, և բաց թողնելով Սեյրանյանին, իսկույն վեր թռավ տեղից: Սեյրանյանը մնաց ապշած: Աղա Յագոր Բուղդանիչն առհասարակ շատ քիչ էր մտնում նրա սենյակը և այս անգամ, երևի, չար բախտն էր բերում նրան, որպեսզի մի հարվածին ավելացնի և մյուսը:

Մենք, իհարկե, չենք կարող նկարագրել, թե այդ ժամանակ այդտեղ ինչ տեսարան ներկայացավ, թե ո՛րքան հիշոցներ, անվայել ածականներ, մինչև անգամ և կյանքի վերա սպառնալիքներ թափվեցան Նունեի և Սեյրանյանի գլխին, միայն այսքանս կասենք, որ մյուս օրն առավոտյան Սեյրանյանի սենյակն արդեն դատարկված էր, և բոլոր կայքը նրա հորեղբոր այրի կնոջ տունն էր տարված, իսկ ինքը, Սեյրանյանն, արդեն իրենց գյուղի ճանապարհի վերա էր:

Դ

Այդ օրից անցել էր մի տարի: Մենք Նունեին և Սեյրանյանին դարձյալ տեսնում ենք մեր երկրորդ գլխում նկարագրած խուցի մեջ կես գիշերին անձրևային եղանակին:

Երկարատև անջատումից հետո կրկին տեսակցությունը նրանց վերա մեծ ազդեցություն էր արել, մանավանդ Սեյրանյանի՝ որ ամեն հույս կտրել էր, թե երբևիցե դարձյալ կարող էր տեսնել յուր սիրելիին, խոսել նրա հետ: Սակայն ի՞նչ զորություն կարող է բոլորովին ազատել երկու ամենաջերմ կերպով սիրող սրտեր.— այժմ Սեյրանյանը դարձյալ Նունեի գրկումն էր:

Օրիորդը խոսել չէր կարողանում. նրա հորդառատ արտասուքը արգելում էր նրան մի բառ անգամ արտասանելու. նա ույժ տալով յուր թույլ ձեռքերին, աշխատում էր որքան կարելի է սիրած երիտասարդին պինդ սեղմել յուր կրծքին: Նա կարծես վախենում էր, որ նրան դարձյալ կխլեն յուր գրկից, նրան այլևս երբեք չէր տեսնիլ: Սեյրանյանը լսելով նրա հեծկլտանքը և միևնույն ժամանակ մտաբերելով յուր անցյալը, չկարողացավ իրեն զսպել և ինքն էլ անմեղ երեխայի նման սկսեց լալ:

Տակավին երկար գրկախառնված, նրանք հեծկլտում էին ամեն ինչ մոռացած — երբ վերջապես սաստիկ քամին սուլելով անձրևի հետ ներս թափանցեց բաց դռնից և սթափեցրեց նրանց:

— Ե՛կ, իմ կյանքս, իմ հոգիս, իմ հրեշտակս... Ե՛կ, նստիր այստեղ,— ասաց Սեյրանյանը և գրկելով բոլորովին ույժից ընկած օրիորդին, նստեցրեց մահճակալի վերա, իսկ ինքը փակեց դուռը:— Օ՜, որքան բան ունիմ ես քեզ ասելու, քեզնից հարցնելու, անգին իմ Նունե,— խոսեց նա դարձյալ՝ նստելով օրիորդի կողքին և բռնելով նրա դողդոջուն, քնքուշ ձեռքերը:— Բայց դու կմրսես, հրեշտակս. դու բոլորովին թրջվել ես... Սպասիր, իսկույն վերարկուս ծածկեմ.— և դարձյալ վեր կացավ տեղից, վերցրեց պատից կախած յուր հին վերարկուն և գորովագութ մոր նման գցեց օրիորդի թեթև կերպով ցնցվող ուսերի վերա:— Այսպես այժմ դու կտաքանաս,— սկսեց նա դարձյալ նստելով նրա կողքին:— Այժմ ասա՜, հրեշտակս, դու ի՞նչ գիտեիր, թե ես այստեղ եմ...

— Գրիգո՛ր, մի՞թե ես եկել եմ քո այդպիսի չնչին հարցերին պատասխանելու... բավական է, որ ես դարձյալ քեզ հետ խոսում եմ...

Մռայլ երիտասարդի աչքերը փայլեցին ուրախությամբ, և նա համբույրներով ծածկեց օրիորդի նիհար, քնքուշ, սպիտակ ձեռքերը:

— Անգին Նունե, գիտե՞ս, թե ո՛րպիսի երջանկություն են պատճառում թշվառիս քո այդ խոսքերը,— բացականչեց նա ոգևորված:— Բայց ինչի՞ չիմանամ, հոգիս, թե դու ինչպես այս կեսգիշերին և այն էլ մի այսպիսի սարսափելի եղանակին կարողացար ինձ մոտ գալ... Դու ի՞նչ գիտեիր, որ ես եկել եմ և այս սենյակումն եմ բնակվում:

— Ա՜խ, Գրիգոր. մի՞թե այդ դժվար է սիրող սրտի համար... Ես քեզ բոլորը կպատմեմ. բայց թող դեռ նայեմ քո դեմքին. չէ՞ որ ամբողջ մի երկար տարի ես քեզ չեմ տեսել: — Եվ նա ձեռքերը գնելով երիտասարդի ուսերի վերա, անհագ կերպով նայում էր նրա մեծ, կրակոտ աչքերին, որոնք այդ րոպեին փայլում էին անհուն երջանկությամբ:— Քո դեմքից ես գուշակում եմ, Գրիգոր, թե որքան վիշտ ու կարոտություն պիտի կրած լինիս, բայց, այնուամենայնիվ, քո աչքերը նույնն են մնացել...

— Իսկ դու թեև ավելի գունատվել ես ու նիհարել՝ բայց սովորականից ավելի գեղեցկացել և ավելի քնքշացել ես,— և նրանք դարձյալ ջերմագին գրկախառնվեցան:— Պատմի՛ր, պատմի՛ր, պատմիր,

հրեշտակս, թե ինչպե՞ս անցրիր դու այս չարագուշակ տարին,— ասաց դարձյալ Սեյրանյանը, վերջապես բաց թողնելով նրան։— Երևում է, որ դու շատ ես տանջվել։

— Այո՛, Գրիգո՛ր, ես շատ, խիստ շատ տանջվեցի այս մի տարվա մեջ, քո բացակայության միջոցին,— սկսեց օրիորդը խոր հոգոց հանելով։— Բավական չէր, որ քեզ այն սոսկալի դժբախտությունը պատահեց, իմ անգութ հայրս էյ քեզ այնպես անարգանքով վռնդեց մեր տանից։ Եվ այդ բոլորը մի այնպիսի սարսափելի վշտի մեջ էր ձգել ինձ, որ ես մինչև այժմ վաղուց արդեն մեռած կլինեի, եթե քո սերը, քեզ կրկին տեսնելու հույսս քաջություն չէին ներշնչել ինձ։ Քո կարոտդ մի կողմից տանջում էր ինձ, իսկ մյուս կողմից էլ իմ անգութ հայրս, այն չարագուշակ օրից հետո, ինձ մի րոպե անգամ հանգստություն չէր տալիս, ի՞նչ անասելի անարգանք ու անվայել խոսքեր ասես, որ նա իմ գլխիս չէր թափում... Որքան էլ քաջասրտություն ունենայի, Գրիգոր, որքան էլ նրա այդ խոսքերը ոչնչի տեղ չդնեի, բայց, այնուամենայնիվ, ես կին էի— մի թույլ, զգացող արարած, ես դիմանալ չէի կարող այս բոլորին— և ես վերջապես, գրեթե մերձ ի մահ հիվանդացա... Այդ ժամանակվանից միայն իմ անգութ հայրս լռեց, այդ ժամանակ միայն նա հասկացավ, որ ինձ հետ շատ խիստ ու անխիղճ կերպով էր վարվում. և երբ ես առողջացա, այնուհետև նա ինձ մինչև օրս էլ ոչ մի անվայել խոսք չի ասել, մինչև անգամ մեր սիրո մասին ոչինչ չի հիշեցրել և ինձ հետ միշտ քաղցրությամբ է վարվել, իսկ մայրս, որ ինձ միշտ պաշտպանում էր, այժմ էլ ինձ սրբի տեղ պաշտում է... Եվ չնայելով, որ ես առողջացա, բայց մեր սիրո ցավը սարսափելի կերպով կրծում էր սիրտս, մանավանդ որ քեզնից ոչ մի լուր չէի ստանում... Ամեն օր, ամեն օր, ամեն րոպե իմ միտքս միշտ և միշտ քեզ մոտ էր։ Ավելորդ է ասելը, թե ինչպես անցրի ես այս ամբողջ երկար տարին... Ես հույս ունեի, որ դարձյալ քեզ կտեսնեմ և այդ հույսս իրագործվեցավ սրանից երեք օր առաջ երեկոյան, երբ դու այնպես շտապով անցնում էիր մեր տան առջևով։ Ես այդ րոպեին մեր պատշգամբումն էի, և միտքս ամբողջապես դարձյալ դու էիր պաշարել։ Ես հիշում էի մեր անցյալը, մեր քաղցր անցյալը, երևակայում էի քո վիճակը, և, ո՞վ գիտե, թե ինչեր էի մտածում քեզ վերա, ես վերջապես չկարողացա ինձ զսպել և լաց եղա... Օ, Գրիգոր, դու չես կարող երևակայել, որքան ծանրություն էի զգում առանց քեզ... Ես տեսա քեզ անցնելիս մեր պատշգամբի տակով, իսկույն ճանաչեցի քեզ և այդ ժամանակ չգիտեմ, թե հանկարծ ինչ պատահեցավ ինձ, միայն ակամայից մի ճիչ արձակեցի և ընկա ուշաթափ... ինձ ուշքի բերին և երբ ուշաթափվելուս պատճառն հարցրին, ես պատասխանեցի, որ գլխիս վերա հանկարծ մի ինչ-որ սաստիկ ցավ զգացի, որին իբր թե չկարողացա դիմանալ։ Այնուհետև ամբողջ երեք օր ես մի վայրկյան անգամ հանգստություն չունեի... վերջապես ես վճռեցի անպատճառ տեսնվել քեզ հետ, ես այլևս չէի կարողանում համբերել։ Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս իմանայի, թե դու որտեղ ես բնակում,— այդ միտքն ինձ հուսահատեցնում էր... Երեկ երեկոյան ես դարձյալ մեր պատշգամբումն էի, և աչքերս ակամայից քեզ էին որոնում, իսկ ներսից կարծես մեկն ասում էր, որ դու պիտի անցնես այն կողմովն, և իրավ որ ես տեսա քեզ վերևից շտապով գալիս, դու այնպես էիր անցնում, որ կարծես քեզ ոչինչ չէր հետաքրքրում. մինչև անգամ չէիր նայում մեր պատշգամբին։ Իսկույն ես ներս գնացի, գլխարկս ծածկեցի, ներքև վազեցի, և առանց աչքս հեռացնելու, հեռվից սկսեցի հետևել քեզ մինչև այստեղ— սենյակդ։ Օ՜, Գրիգոր, ես պատրաստ էի այդ ժամանակ ներս ընկնել քեզ մոտ, եթե միայն... չամաչեի և երկյուղ չկրեի ուրիշներից... Բայց ես խո իմանում էի քո բնակությանդ տեղը, ուրիշ ի՞նչ էր հարկավոր ինձ այլևս... սակայն դարձյալ մի միտք ինձ անհանգստացնում էր, այն՝ թե ի՞նչպես և ե՞րբ տեսնվեի քեզ հետ։ Շատ մտածելուց հետո վերջապես վճռեցի հենց այս գիշեր անպատճառ գալ քեզ մոտ՝ թեկուզ դրա համար ինձ սպանելու էլ լինեին։ Ամեն կողմից ինձ հաջողություն էին խոստանում միտքս իրագործելու, հայրս, որից ես ամենից շատ էի երկյուղ կրում, բոլորովին արբած վերադարձավ տուն և իսկույն ևեթ քնեց, մայրս էլ երկար չմնաց արթուն— նա էլ մենակության պատճառով շուտով քնեց, իսկ եղանակի վատության պատճառով մեր բնակիչները բոլորը տուն էին մտել, և այսպես ես ոչ ոքից երկյուղ չունեի։ Իմ ննջարանս բոլորովին առանձին է. ես կամաց ու աներկյուղ դուրս եկա և վճռականապես դիմեցի դեպի քո սենյակը։ Եվ այժմ, ահա՛, ես այստեղ— քեզ մոտ եմ, ի՛մ Գրիգոր։

Եվ օրիորդը վերջին խոսքերի հետ փաթաթվեցավ նրա վզովը։

— Դու հերոս ես, իմ անգի՛ն Նունե,— բացականչեց ոգևորված երիտասարդը։

— Այո՛, սերն ինձ նման թույլ արարածներին անգամ քաջություն է տալիս,— շշնջաց օրիորդը։— Ես քեզ բոլորը պատմեցի, Գրիգոր,— խոսեց դարձյալ մի րոպեից հետո,— բայց ես գիտեմ, տեսնում եմ, որ իմ տանջանքս համեմատելով քոնի հետ՝ չնչին մի բան պիտի լինի, այնպես չէ՞, Գրիգորս... Բայց պատմիր, պատմիր քո այս մի տարվա կյանքը, ես չափից դուրս հետաքրքրվում եմ դրանով։ Շորերդ, դեմքդ ցույց են տալիս, որ դու ավելի ես կորցրել, քան որ ես էի կարծում։

Երիտասարդի դեմքը դարձյալ մռայլվեցավ, դառնության կնճիռները դարձյալ ծածկեցին նրա լայն ճակատը։

— Այն օրից, երբ իմ խաբուսիկ բախտի անիվը սկսեց հակառակ պտտվել,— սկսեց նա,— այսինքն այն օրից, երբ իմ անբախտ ծնողներիս մահվան գույժն ստացա և այնպես խիստ կերպով անարգվեցա քո հորից, մինչև օրս տակավին ոչ մի բան ինձ ուրախություն, մի քաղցր ժպիտ անգամ չի պատճառել... Ես, իհարկե, քեզ չեմ պատմի մանրամասնորեն, թե ինչ եմ կրել ես այս ամբողջ մի տարվա ընթացքում. միայն այսքանս կասեմ, որ իմ սիրտս բոլոր այդ ժամանակ թույն էր...

«Երբ ես գնացի մեր գյուղը, սրտի անպատմելի վշտով տեսա անբախտ ծնողներիս անտեր թափած դիակները, որոնց անգութ թուրք ավազակները, որ նոր էին հայտնվել մեր գյուղի շրջակայքում, իրենց ագահությանը զոհ էին տարել։ Իմանալով, որ իմ հայրս գրեթե ամենահարուստն է ամբողջ գյուղի մեջ, նրանք օգուտ են քաղել եղանակի վատությունից, գիշերով մտել են մեր տունը և հրամայել են ծնողներիս, որ իրենց հարստության տեղը ցույց տան, հակառակ դեպքում սպառնացել են երկուսին էլ մորթելու։ Հայրս վատ սովորություն ուներ հարստության մեծ մասը ձեռքի տակ պահելու և այն էլ փող դարձրած. նա այդ պահում էր միայն իրեն հայտնի գաղտնի տեղում։ Դեռ երկար ժամանակ նա չի կամեցել զրկվել յուր այդ խնայողությամբ գումարած հարստությունից. բայց վերջապես, նա իրեն կյանքն ավելի թանկ է համարել, քան հարստությունը և բոլորը հանձնել է ավազակներին։ Չգիտեմ, թե գումարը որքան է եղել իսկապես, բայց գիտեմ, որ բավական շատ պետք է լիներ։ Սակայն անիրավ ավազակները դրանով չեն բավականանում և, երկյուղ կրելով, թե մի գուցե ծնողներս նրանց մատնեն, նրանք երկուսին էլ մորթում են ու փախչում։

Այդ բոլորը ինձ պատմեց մեր ծառան, որ այդ տեսարանին ներկա է եղել, բայց մի կերպով ազատվել է նրանց ձեռքից։ Հարևան քաղաքի ոստիկանությունը թեպետ իմացել և իսկույն հետախուզություն է սկսել, բայց ավազակները մինչև օրս էլ կորած են։

Ամբողջ հինգ օր անբախտ ծնողներիս դիակներն ընկած էին, և ես նրանց թաղելու փող չէի գտնում։ Մենք ունեինք մի փոքրիկ կալվածք, մի քանի լավ եզներ ու ոչխար, վերջինս տանող-տանողի է եղել, իսկ եզների վերաբերմամբ մի փոքր ազնիվ են գտնվել։ Եզներին իսկույն ևեթ ծախեցի շատ աժան գնով և ստացած փողով թաղեցի ծնողներիս... Այնուհետև ո՞ւր գնայի, ի՞նչ անեի, ինչպե՞ս կառավարվեի — այդ հարցերն էին ինձ անդադար զբաղեցնում, և իմ ուղեղս մի այնպիսի թմրած դրության մեջ էր, որ դրանց ոչ մի կերպ լուծել չէի կարողանում։ Մի կողմից իմ սիրելի ծնողներիս անտանելի կորուստը, մյուս կողմից մեր անտանելի անջատումը, երրորդ կողմից իմ աղքատանալս, մի խոսքով՝ այն անհամար ձախորդություններն ու հարվածները, որ ամեն կողմից տեղում էին թշվառիս վերա, ինձ մի տեսակ անտանելի, հուսահատական դրության մեջ էին ձգել, այնպես որ ես այժմ զարմանում եմ, թե ինչպես եղավ, որ չխելագարվեցի... կյանքը ինձ համար այնքան անտանելի էր, որ մինչև իսկ մի քանի անգամ մտադրվեցի ինքնասպանություն գործել, բայց այդ առավել ևս սարսափելի էր թվում ինձ, երբ մտածում էի դրա բոլոր հետևանքների մասին։

— Ո՛չ,— մտածում էի ես՝ հիշելով քո խոսքերը,— Նունեն ուղիղ էր ասում, ավելի լավ է կռվել կյանքի դառնությունների դեմ, և հաղթանակը գուցե իմ կողմը լինի... չէ՞ որ ես մարդ եմ, այլ խոսքերով — ամենաուժեղը բոլոր արարածների մեջ... Ամեն բան պետք է փորձել։ Այդ խոսքերն անպայման դրոշմված են յուրաքանչյուրիս վերա — այդպես է կյանքը, այդպես է մարդկությունը... Խո՛ հավիտյան չեմ տանջվիլ... երևի մի օր ինձ համար դարձյալ պայծառ օր կփայլե... Եվ այդ

խրախուսանքն ինձ սիրտ էր տալիս, այդպիսի մտածմունքներից հետո իմ անտանելի վիշտս փոքր-ինչ թեթևանում էր»:

Նա լռեց և ձեռքը մի քանի անգամ անցրեց իր երկար մազերի միջով: Նրա բոլոր այդ պատմության ժամանակ Նունեն ձեռքը փաթաթել էր նրա պարանոցովը և յուր գեղեցիկ գլուխը դրած նրա ուսին՝ մեծ կարեկցությամբ նայում էր նրա թախծալից դեմքին և աչքերին:

— Ես քեզ մի քանի անգամ ասել էի, սիրելիս,— շարունակեց նա փոքր-ինչ հանգստանալուց հետո,— որ համալսարան պիտի գնամ՝ ուսումս շարունակելու: Հասկանալի է, որ այդ խափանվեցավ. դրա համար փող էր հարկավոր, իսկ ես դեռ գյուղումը հազիվ էի կարողանում կառավարվել... Ո՞ւմ դիմեի, ոչ ոք չկար. և եթե ունենայի էլ մի այդպիսի ազգական կամ, ինչպես ասում են, բարեկամ, ո՞վ է գժվել այս ժամանակին մի որևիցե ինձ նման աղքատին օգնելու... Ես ո՛չ մի կերպ չէի կամենում այստեղ — քաղաք իջնել: Քաղաքում ապրելն ինձ համար որքան անկարելի, նույնքան և անտանելի պիտի լիներ, ավելի այն պատճառով իհարկե, որ պիտի ապրեի քեզ մոտ, բայց քեզ հետ տեսնվելը, խոսելը մինչև անգամ ողջունելը արգելված պիտի լիներ... Քեզ վերա ունեցած բոլոր հույսս դեռ այն ժամանակվանից կտրեցի, երբ քո հայրն այնպես խիստ անարգանքով և կյանքիս դեմ սպառնանք կարդալով վռնդեց ձեր տնից: Եվ այդ պատճառով ես մի տարի շարունակ մեր գյուղում մնացի: Այդ միջոցին ես ամեն կերպ աշխատում էի քեզ մոռանալ, ճնշել, մեռցնել իմ մեջ այն սարսափելի կերպով կեղեքող զգացմունքը, որ ես տածում էի դեպի քեզ. բայց՝ անգի՛ն իմ Նունե, մի՞թե այդ կարելի էր... մի՞թե կարելի է սոսկալի հրդեհը փչելով հանգցնել...

Շատ անգամ նստած մենակ, ես դառնությամբ մտածում էի իմ անհոգ անցյալի վերա, երբ մի տարի առաջ ես ապրում էի քեզ հետ միասին, երբ մենք սիրում էինք միմյանց ազատ, խոսում, դատում, վիճաբանում էինք, երբ երջանիկ էինք բառիս բուն նշանակությամբ, և այդ մտածմունքը, այդ դառն մտածմունքը ավելի ու ավելի կրկնապատկում էր իմ վիշտը... Որ կողմս նայում էի— ամենուրեք գերեզմանական լռություն... չունեի գոնե մի բարեկամ, մի մտերիմ ընկեր, որ այդպիսի ժամանակներում ինձ մի քանի մխիթարական խոսքեր ասեր, չկայիր դու, անգի՛ն իմ Նունե, որ քո այդ քաղցր, սփոփիչ լեզվով թեթևացնեիր իմ անտանելի վիշտս և իմ մեջ նոր հույս, նոր եռանդ ներշնչեիր... Եվ այդպիսի ժամանակներում ես ճարահատյալ անձնատուր էի լինում լացին, ես դառն արտասուք էի թափում, և իմ այդ արտասուքս վերջ չէր ունենում:

— Այս թուլասրտությո՛ւն է,— ասացի վերջապես ինքս ինձ և այնուհետև ամբողջ մի տարի ես միայն գրքերին անձնատուր եղա: Այդ բոլոր ժամանակ ես կառավարվում էի մեր փոքրիկ կալվածքից ստացած փողով, որ շատ աժան գնով ծախեցի: Այնուհետև չգիտեի, թե ի՞նչ պիտի անեմ... Ես մի որոշյալ ապագայի հույս չունեի և ամեն բան բախտի բերմունքին էի թողել— թո՛ղ ճակատագիրս կատարվի,— անդադար կրկնում էի ես:

Մի անգամ, այսինքն սրանից երկու շաբաթ առաջ, Պետերբուրգից ես մի նամակ ստացա, որ իմ դասընկերիցս էր: Ես ու նա միասին պիտի գնայինք համալսարան, նա գնաց Պետերբուրգ, իսկ ինձ պատահած դժբախտության պատճառով ես մնացի: Նա գրում էր յուր նամակում, որ լսել է իմ դժբախտությունս, այսինքն իմ բոլորովին աղքատանալս, և խորհուրդ էր տալիս, որ եթե ես չեմ փոխել ուսումս շարունակելու մտադրությունս, թող մինչև Պետերբուրգ հասնելու ճանապարհածախս ճարեմ և այս տարի գնամ այնտեղ համալսարան մտնելու: Թեպետև նա շատ հարստի զավակ չէ, բայց այնուամենայնիվ խոստանում էր, որ ինձ մի կերպ կարող էր յուր մոտ պահել: Այդ, իհարկե, ինձ համար մեծ ուրախություն էր, և ես շտապեցի այստեղ — քաղաք իջնելու: Այնտեղ անմիջապես սկսեցի հանգանակություն անել իմ ընկերներիս մեջ, որոնք շատ քիչ են, բայց ժողովածն այնքան չնչին է, որ չոր հացի համար անգամ բավական չէ մինչև տեղ հասնելս... Եվ այժմ չգիտեմ թե ինչ պիտի անեմ:

Նունեն թողեց նրա պարանոցն և նայելով ուղղակի նրա գրեթե արտասվալից աչքերին, ասաց.

— Եվ դրա համար դու հուսահատվո՞ւմ ես, Գրիգոր:

— Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել, անգին Նունե. իմ բոլոր հույսն դրա վերա էր. բայց երբ այդ ևս չհաջողվեցավ...

— Դու բոլորին դիմե՞լ ես դրա համար:

— Բոլորին, ում հետ էլ որ լավ ծանոթ եմ:

— Իսկ ինձ դիմե՞լ ես:

Երիտասարդը զարմացմամբ նայեց ուղղակի նրա աչքերին:

— Քե՞զ,— կանչեց նա:

— Հենց ինձ, ինչի՞ ես զարմանում:

— Բայց դու ի՞նչ ունիս, անգին Նունե:

— Այնքան փող, որ իմ կարծիքով կարող է ճանապարհածախսդ ծածկել:

— Դու կատա՞կ ես անում, Նունե...

— Հավատացիր, Գրիգոր, ես անկեղծ եմ ասում... Անցյալ տարվա ռոճիկիս մի մասն է, որ ես պահած ունեմ... Այս տարի հիվանդությանս պատճառով ես ուսումնարան չէի գնում, ապա թե ոչ ավելի կունենայի հավաքած... Բայց ինչ որ ունիմ, այն էլ բավական է քեզ տեղ հասնելու համար, իսկ այնուհետև բոլոր ռոճիկս քեզ կուղարկեմ, որովհետև ես այժմ ինձ բավական առողջ եմ զգում և ինձ համար դարձյալ տեղ կճարեմ ուսումնարանում:

Սեյրանյանը դեռ մի րոպե լուռ, կարծես պապանձված, նայեց նրա լուրջ, գեղեցիկ դեմքին, հետո գլուխը կախեց, և արտասուքի կաթիլներ գլորվեցին նրա այտերի վերայով:

— Աստված իմ, դու լալի՞ս ես, Գրիգոր,— կանչեց օրիորդը նրա ձեռքերը բռնելով:

— Ես ամաչում եմ...— շշնջաց Սեյրանյանը:

— Օ՛, նրա համար, որ ես կամենում եմ քեզ օգնե՞լ...

Եվ օրիորդը ջերմագին գրկեց նրան:

— Սեմի՛տ, չէ՞ որ ես քեզ սիրում եմ,— շշնջաց նա նրա ականջին:

Երիտասարդը յուր գլուխը սեղմեց նրա կրծքին, նրանք այդպես անշարժ մնացին երկար:

Վերջապես հանկարծ օրիորդը բաց թողեց նրան և վեր կացավ տեղից:

— Ես ուշացա,— ասաց նա,— ո՛վ գիտե լուսանում է...

Եվ նա դիմեց դեպի դուռը:

— Սպասի՛ր, մենակ խո՞ չես կարող գնալ,— կանչեց Սեյրանյանն և վեր թռչելով տեղից, շտապով ծածկեց գլխարկը, վերցրեց անկյունից հաստ ձեռնափայտը, և երկուսով դուրս գնացին:

Անձրևը վաղուց արդեն դադարել էր, և քամին հանդարտվել. երկնքում պլպլում էին անթիվ աստղեր, իսկ հեռու արևելքում արշալույսը նոր-նոր սկսել էր բացվել: Փողոցում բոլորովին ցեխ չկար. հեղեղանման անձրևը քշել, տարել էր յուր ջրերի հետ հողն ու աղբը, և այժմ գիշերային

մթության մեջ սպիտակին էին տալիս քաղաքի քարած փողոցները: Փողոցներում մարդ չէր երևում: Նրանք կամաց խոսելով առաջ էին գնում:

— Այժմ ձեր բակի դուռը բա՞ց կլինի, հանկարծ անհանգստությամբ հարցրեց Սեյրանյանը:

— Դու չգիտե՞ս, որ մեր բակի դուռը գիշեր-ցերեկ բաց է լինում,— պատասխանեց օրիորդը:

Նրանք հասան աղա Յագոր Բուղդանիչի տան բակի դռներին:

— Առ քո վերարկուդ, Գրիգոր,— ասաց օրիորդը և վերարկուն, որ մինչև այդ ժամանակ յուր ուսերին էր ծածկել, գցեց Սեյրանյանի ուսերին:— Բարի՛ գիշեր, Գրիգոր... մինչև վաղը...

— Բարի գիշեր, իմ հրեշտա՛կս,— շշնջաց երիտասարդը և ջերմ կերպով համբուրեց նրա ձեռքը:

Օրիորդը անհետացավ իրենց բակի դռներից ներս, իսկ Սեյրանյանը, կարծես վերածնված, վերադարձավ յուր խուցը:

Ամառը երբեմն եղանակը մի քանի օր շարունակ միևնույն ժամերին միանման է լինում: Զարմանալի չէ ուրեմն, որ հետևյալ գիշերն էլ եղանակն շատ վատ էր, անձրև էր գալիս և սարսափելի որոտում:

Սեյրանյանն անհանգստությամբ սպասում էր Նունեի գալուն: Նա շուտ-շուտ դուրս էր նայում, բայց տակավին Նունեն չկար: Հազար ու մի չար մտքեր ալեկոծում էին նրա սիրտը, եթե օրիորդին մի բան պատահելու լինի, ո՞վ կլինի մեղավորը, ո՞վ կլինի պատճառը... Նա անիծեց իր ծնունդը, հագավ վերարկուն և անկյունից վերցնելով յուր հաստ ձեռնափայտը, դուրս գնաց շտապով: Արդեն ժամի տասնմեկն էր խփում քաղաքային ժամացույցը, անձրևը շարունակ շփշփում էր, պեծին-պեծին էր տալիս, փողոցներում դարձյալ մարդ չէր երևում, միայն մի քանի կառքեր գլուխները ծածկած անցնում էին գոգռալով:

Սեյրանյանը շտապ քայլերով գնում էր դեպի աղա Յագոր Բուղդանիչի տան կողմը, նա վճռել էր գնալ և սպասել Նունեին նրանց դռների մոտ: Բայց ահա հեռվից ով որ շտապով գալիս էր դեպի նա: Նրանք մոտեցան, և Սեյրանյանը ճանաչեց նրան:

— Նունե՛,— կանչեց նա ուրախությամբ:

— Այդ դո՞ւ ես, Գրիգոր, կարծեցի, թե ավազակ ես... գնանք շուտով:

Եվ նրանք ծիծաղելով ձեռք-ձեռքի տվին և գրեթե շարունակ վազելով, հասան մեզ ծանոթ խուցը:

— Ես քո մասին սկսել էի շատ անհանգիստ լինել, հրեշտակս,— ասաց Սեյրանյանը՝ դուռը փակելուց հետո նստելով օրիորդի կողքին, որ արդեն մտնելուն պես վերայի շալը մի կողմն էր ձգել և ժպիտը դեմքին մահճակալի վերա նստել:

— Ես կարծում էի, թե ձեր տանը իմացել են:

— Օ՛, ոչ,— կանչեց ուրախ ծիծաղելով օրիորդը,— երեկ գիշեր, որ այստեղից վերադարձա տուն, ոչ ոք ոչինչ չլսեց: Ես կամաց մտա սենյակս, և որպեսզի ծնողներս չիմանային, որ ես գիշերով դուրսն եմ եղել, իսկույն ևեթ շորերս փռեցի, և մինչև առավոտն արդեն ցամաքել էին, և բացի այդ ես հին շորերս ունեի հագած, ահա այս. իսկ տանն հագնելու շորս ուրիշ է... Բայց այս գիշեր իմ ուշանալուս պատճառն այն էր, որ հայրս երեկվանից մի փոքր ուշ քնեց, նա դարձյալ արբած էր... խմելը նրա համար արդեն բնավորություն է դարձել, դու այդ գիտես... Ամեն կողմից դարձյալ ինձ հաջողություն էին խոստանում... Տեսնո՞ւմ ես, Գրիգոր, բնությունն անգամ մեր կողմն է, չնայելով որ մի լավ էլ թրջվեցինք:

Եվ դարձյալ ուրախ կերպով ծիծաղեց, իսկ Սեյրանյանն անհագ կերպով նայում էր նրա քնքուշ, չքնաղ դեմքին և միայն ժպտում էր:

— Այս ի՞նչ վատ սենյակում ես ապրում, Գրիգոր,— խոսեց դարձյալ օրիորդը՝ չորս կողմն ակնարկ ձգելուց հետո:— Երեկ գիշեր ես այնպես հափշտակված էի քեզ վերստին գտնելովս, որ բոլորովին չնկատեցի, թե քո սենյակն այսպես մութ, խոնավ, աղքատ է... չէ՞ որ դու այստեղ կհիվանդանաս:

— Ի՞նչ կարող եմ անել, սիրելիս, դեռ սրա վարձն էլ հազիվ կարողացա վճարել, ո՞ւր մնաց որ սրանից լավ սենյակում ապրեի...

— Ամսական ի՞նչ ես վճարում:

— Երկու ռուբլի:

— Իսկ մինչև օրս ինչո՞վ էիր կառավարվում:

— Մի քանի ռուբլի ունեի, այն էլ այս մի քանի օրերս հատավ:

— Հետո ի՞նչ պիտի անեիր:

— Աստված գիտե...

— Ճաշելիս ի՞նչ ես ուտում:

— Միայն ցամաք հաց:

— Թեյ խմո՞ւմ ես:

— Այդ քանի՛ ժամանակ է, ինչ ես թեյի երես չեմ տեսել:— Նրա ձայնը դողաց, և նա աչքերը վայր թողեց:

— Խե՛ղճ, անբախտ իմ Գրիգոր,— մեծ կարեկցությամբ խոսեց օրիորդը՝ գրկելով նրա պարանոցը:— Ո՛րպես մարդուս բախտը փոփոխական է, տեսնո՞ւմ ես — մեկն այսօր հարուստ է, վաղն արդեն աղքատ, մուրացկան. մեկն այսօր երջանիկ է, վաղն արդեն ամենաթշվառը... այդ սարսափելի է... Այո՛, ես հասկանում եմ քո դրությունը, անբա՛խտ իմ Գրիգոր, անգի՛ն իմ Գրիգոր... և կաշխատեմ միշտ օգնության ձեռք կարկառել քեզ... այդ ես կարող եմ և պետք է անեմ... միայն թե դու միշտ քաջասիրտ կաց, հաստատակամ, երբեք թշվառությանդ մասին մի՛ մտածիլ... միշտ ուրախ կաց, ծիծաղիր, խնդա... քո թախծությունը առավել ևս կտրատում է իմ սիրտս... չէ՞ որ այդ սիրտը քոնն է, քոնը մինչև վերջին շունչս...

Սեյրանյանի աչքերում հավաքվել էին արտասուքի կաթիլներ. նա միայն լռում էր:

Օրիորդը հանեց գրպանից թղթի մի փոքրիկ փաթաթոց և, տալով նրան, ասաց.

— Ահա՛, Գրիգոր, որ երեկ գիշեր խոստացա:

Սեյրանյանը մեքենայաբար առավ այն. հավաքված կաթիլները հանկարծ դուրս ցայտեցին նրա աչքերից, և նա, ընկնելով ծնկների վերա օրիորդի առաջ, սկսեց անդադար համբուրել նրա ձեռքերը և լալ, առանց մի ձայն հանելու:

— Ի՞նչ ես անում, Գրիգոր, ի՞նչ ես անում,— կանչեց իսկույն օրիորդը և շտապով ետ քաշեց ձեռքերը,— վեր կաց, աղաչում եմ, վեր կաց...— Սեյրանյանը չէր ուզում վեր կենալ:

— Ես իսկույն այստեղից կփախչեմ, եթե դու ինձ չես լսի...

Եվ օրիորդը վեր կացավ ու ցույց տվավ, թե ուզում է դուրս գնալ:

— Կա՛ց,— շշնջաց Սեյրանյանը և վեր կացավ:

— Տե՛ր աստված, մի՞թե կարելի է այդպես անել— ասաց օրիորդը անբավական ձայնով:— Ես չեմ կարող ասել, թե ինչպե՛ս դու վիրավորեցիր դրանով իմ սիրտը... Այդպիսի ամենաչնչին բաների համար թե դու միշտ այդպես արեցիր, այսուհետև ես այլևս... քո երեսին անգամ չեմ նայիլ:

— Ներիր...— ուզեց խոսել Սեյրանյանը, բայց հանկարծ օրիորդը մի ձեռքով փակեց նրա բերանը և մյուս ձեռքով գրկեց պարանոցը, համբուրեց նրա ճակատը և ծիծաղելով դարձյալ բաց թողեց նրան:

— Այժմ դու ինձ այս ասա. ե՞րբ ես ճանապարհ ընկնում,— հարցրեց նա դարձյալ ծիծաղելով:

— Ե՞րբ... չուշանալու համար մի քանի օրից հետո,— պատասխանեց Սեյրանյանը:

Չորս օրից հետո, արդեն բոլոր պատրաստությունները տեսած, Սեյրանյանը ճանապարհ պիտի ընկներ դեպի Պետերբուրգ: Դրա նախորդ գիշերը սիրահարները դարձյալ տեսնվեցան միմյանց հետ: Խիստ սրտաշարժ էր նրանց անջատման րոպեն. նրանք երկար, շատ երկար ժամանակ միմյանց գրկած արտասուք էին թափում միայն...

Օրիորդը «գնաս բարևի» վերջի րոպեին ասաց նրան.

— Գնա՛, Գրիգորս, աստված քեզ հետ. քեզ ընկեր է իմ հոգիս... չմոռանաս ինձ և միշտ նամակ գրիր... Եթե կենդանի մնացինք, մենք դարձյալ կտեսնվենք և... և... այնուհետև արդեն երջանիկ կլինենք...

Մյուս օրն առավոտյան Սեյրանյանն արդեն Պետերբուրգի ճանապարհի վերա էր:

Ե

Այդ օրից անցել էր հինգ տարի:

Հուլիսի սկիզբն էր:

Երեկոյան մայր մտնող արևի վերջին թույլ ճառագայթները լուսավորում էին ամառանոցի գեղեցկաշեն տների ապակիները, որոնք հեռվից վառ ճրագների էին նմանում:

Ցերեկվա շոգից հետո օդի մեջ սկսել էր արդեն մի տեսակ զովություն տիրել: Թռչունները տակավին ճլվլում էին ծառերի վերա: Հասարակաց այգիում նվագում էր զինվորական երաժշտական խումբը: Ամառանոցի գրեթե բոլոր բնակիչները՝ երեխաներից սկսած մինչև ծերերը՝ բոլորն էլ այնտեղ էին: Ահա այստեղ մայրը, հանդարտ զբոսնելով, նայում է ուրախությամբ յուր սիրելի զավակներին, որոնք օտարների երեխանց հետ բարեկամանալով, վազվզում են այգիների ճեմելիքներում. այնտեղ երիտասարդ երջանիկ ամուսինները կուռ-կուռի տված՝ ծանր-ծանր շարժում են ոտները, մյուս կողմն ուսումնարանների երկու սեռին պատկանող զվարճասեր երիտասարդներ միմյանց առաջ հազար ու մի կոմպլիմաններ են թափում— մի խոսքով, որ կողմը դառնայիր — ամենուրեք — ժպիտ, ծիծաղ, ուրախություն, բերկրանք...

Բայց այդ ընդհանուր ուրախությանը չէր մասնակցում մեկը:— Դա մի կին էր, որ այդ ժամանակ գտնվում էր այգիից ոչ այնքան հեռու գտնված մի գեղեցկաշեն տան վերին հարկի սենյակներից մեկում, որի բոլորովին բաց պատուհանները նայում էին դեպի այգին: Նա նստած էր սենյակի

մեջտեղում դրված կլոր սեղանի առաջ՝ բազկաթոռի վերա: Նրա գլուխը կարծես ակամայից թույլ կերպով ընկած էր ձախ ուսի վերա, իսկ աջ ձեռքը դանդաղ կերպով շարժում էր գրիչը, առջևը դրված թղթի վերա:

Դեռ մի քանի րոպե նա այդպես գրում էր, հետո երևի, հոգնելով, գրիչը վայր դրեց կամ, ավելի լավ ասած, գրիչը վայր ընկավ նրա ձեռքից և, մի քանի վայրկյան անշարժ մնալուց հետո, նա կամաց վեր կացավ տեղից, և օրորվելով, ինչպես նոր ոտը լինող մի մանուկ, հազիվհազ մոտեցավ պատուհաններից մեկին: Մեղմ հովիկը դրսից շոյեց նրա դեմքը, և նա ազատ շունչ առավ:

Նա շատ նիհար, դեղնած դեմքով, բարձրահասակ, մոտ քսաներեքամյա մի կին էր: Ինչպես երևում էր՝ նրա մարմինը մի ժամանակ բոլորովին կանոնավոր կերպով էր կազմված եղել, իսկ ինքը բավական գեղեցիկ, բայց այժմ նրա խիստ հիվանդության պատճառով, որ աչքի էր ընկնում հենց առաջին հայացքից, նա ավելի մի անդրգերեզմանային ոգու էր նմանում, քան կենդանի արարածի: Նրա սպիտակ, տանու հանդերձը, որ մի տեսակ փայլ էր տալիս նրա դեղնած դեմքին, իջել էր մինչև ոտները և կանգնած էր նրա մարմնի վերա բոլորովին ազատ: Սև մազերը, որոնցից մեծ մասը թափված էր երևում, բոլորովին արձակ, մինչև անգամ խճճված, փռվել էին նրա ուսերի վերա, իսկ դեղնած, ոսկրացած ձեռքերի բարակ կաշվի միջից երևում էին նրա կապույտ երակները:

Երկու րոպեի չափ անշարժ, որպես արձան և մեծ ու սևորակ աչքերը դեպի դուրս, մի կետին հառած՝ նա կանգնած էր պատուհանի առաջ: Նրա դեմքի վերա նշմարվում էր մի տեսակ, ավելի խոր վշտի նմանող, մելամաղձոտ արտահայտություն, որ միաժամանակ բացորոշ ցույց էր տալիս, որ նա արդեն և ակամայից հաշտվել էր յուր դրության հետ: Առհասարակ նրա բոլոր արտաքին տեսքը վկայում էր, որ վիշտն ու թշվառությունը մի անգամից բույն էին դրել նրա մեջ:

Նա երկար չկարողացավ կանգնած մնալ. նրա թույլ ոտները դողացին, և նա անշուշտ վայր կընկներ, եթե բարեբախտաբար, պատուհանի մոտ մի բազկաթոռ չլիներ, որի վերա նա կամաց նստավ: Նա ետ ընկավ բազկաթոռի մեջքի վերա, աչքերը փակեց և երկար ժամանակ նրա բոլոր ուշադրությունը կարծես լարված էր դեպի այգու նվագող մի ինչ-որ տխուր մեղեդին, որի հնչյունները բաց պատուհաններից ներս էին թափանցում սենյակը: Այդ մեղեդին կարծես մի ողբ էր, որ դուրս էր թռչում բազմավիշտ, վշտաբեկ սրտի ամենախորին տեղերից:

Մեղեդին լռեց, բայց կինը տակավին նստած էր նույն անշարժ դրության մեջ: Նա քնած չէր. դեռ երկար նրա ականջներում հնչում էին տխուր մեղեդիի սրտաշարժ ելևէջները, և նրա միտքը թռած էր դեպի հեռուն... Վերջապես նա բացեց աչքերը և նստեց ուղիղ. նրա դեմքը ավելի դեղնած, ավելի խռովված էր: Նա մի կերպ վեր կացավ և հազիվհազ մոտենալով սեղանին, դարձյալ նստավ յուր առաջվա տեղը. նա վերցրեց գրիչը, և կամենում էր շարունակել յուր դրությունը, բայց երևի նրա ուժերը բոլորովին սպառվել էին, որովհետև գրիչը դարձյալ վայր ընկավ ձեռքից:

Հանկարծ նա մի տեսակ անհանգիստ շարժում գործեց և ձեռքը մոտեցնելով սեղանի վերա դրված հնչակին, հնչեցրեց նրան: Իսկույն դուռը բացվեցավ, և ներս մտավ մի ջահել աղախին:

— Բժիշկ,— հազիվ լսելի ձայնով դարձավ դեպի նա հիվանդ կինը:

Աղախինը իսկույն դուրս գնաց:

Հիվանդ կինը դարձյալ մի քանի րոպե մնաց անշարժ բազկաթոռի մեջ. հետո վեր կացավ տեղից և այս անգամ ույժից բոլորովին ընկած՝ հազիվհազ քարշ ընկավ դեպի մահճակալը, որ դրված էր պատի մոտ և որի վերա հստակ անկողին էր գցած մի քանի փափուկ, սպիտակ բարձերով, նա զգուշությամբ երեսն ի վեր պառկեց անկողնի վերա: Նա ձեռքը տարավ ծոցը, հանեց մի ինչ-որ լուսանկար պատկեր և երկար ժամանակ նայում էր նրան: Նրա դժգույն շրթունքները բաց ու խուփ էին լինում, բայց ոչ մի խոսք չէր լսվում. նա կարծես լուռ խոսում էր նույնպես լուռ պատկերի հետ: Վերջապես պատկերը վայր ընկավ նրա ձեռքից և թաքնվեցավ նրա կրծքի մեջ. աչքերը փակվեցան, և նրա կուրծքը աննկատելի կերպով բարձրանում էր ու ցածրանում:

Չանցավ տասը րոպե, և ահա հայտնվեցավ աղախինը բժշկի հետ: Բժիշկը բարձրահասակ, բավական գեղեցկատեսիլ, բայց գունատ և տխուր դեմքով մոտ քսանևութամյա երիտասարդ էր: Հենց առաջին հայացքից երևում էր, որ նա ծանրաբարո, խելացի և շատ բարի մարդ է:

Նա մոտեցավ հիվանդին, հիվանդն անշարժ էր: Նա նայեց հիվանդի դեմքին և սաստիկ ցնցվելով, ակամայից ետ ու ետ գնաց: Աչքերը չռած և դողալով, նա նայում էր խելագարի նման հիվանդի դեմքին. կարծես նրա աչքերի առաջ մի չտեսնված, մի գերբնական բան էր երևում... Վերջապես նա դարձյալ մոտեցավ հիվանդի մահճակալին և գոռաց մի այնպիսի ձայնով, որ անկարելի է բառերով արտահայտել:

— Նունե՛...

Հիվանդ կինը, որ մինչև այդ ժամանակ՝ աչքերը գոց՝ ըստ երևույթին ոչինչ չէր իմանում, այդ ձայնը լսելուն պես մի այնպիսի շարժում գործեց, որ կարծես հիվանդ չլիներ. և իսկույնևեթ բացեց աչքերը, նրա մեռած հայացքն ընկավ բժշկի խռովված դեմքին, նրա դժգույն շրթունքների վերա նրանից անսպասելի մի ժպիտ փայլեց և հիվանդին վայել ուրախ, բայց խիստ նվազ ձայնով շշնջաց.

— Ա՛խ, Գրիգոր...

Եվ նա պարզեց դեպի նա յուր ոսկրացած ձեռքը:

Զ

Գրիգոր Սեյրանյանը, ինչպես մենք արդեն ասացինք, գնաց Պետերբուրգ Նունեի տված գումարով: Նա մտավ այնտեղ համալսարան: Մենք երկար և բարակ չենք խոսիլ նրա հինգ տարի այնտեղ վարած կյանքի մասին, այսքանս միայն կասենք, որ նա մինչև ավարտելը բնակում էր յուր ընկերոջ մոտ, որ կանչել էր նրան նամակով և առաջարկել էր յուր օգնությունը: Նա ամբողջ հինգ տարի ապրում էր յուր ընկերոջ ծախքով և Նունեի երբեմն-երբեմն ուղարկած փողով: Նրանք շատ հասարակ կյանք էին վարում, ինչպես այդ վայել է աղքատ և համեստ ուսանողներին: Անհուն երախտագիտությամբ լցված էր Սեյրանյանի սիրտը դեպի յուր մեծահոգի ընկերը և Նունեն, որոնց միայն նա պարտական էր յուր ներկա վիճակով և պարտական պիտի մնար միանգամայն մինչև յուր վերջին շունչը, որովհետև դրանք միայն հանեցին նրան այն նեղ անտանելի դրությունից, որից դուրս գալու համար, բացի մահը, նա ուրիշ ելք չպիտի ունենար, և դրանք էին միայն այժմ նրա միակ բարեկամ ու խնամատարները:

Սեյրանյանի և Նունեի մեջ անընդհատ նամակագրություն կար:

Ինչպես Սեյրանյանը, նույնպես և նրա ընկերն ընտրել էին բժշկական մասնաճյուղը:

Նրանց նպատակը մեկ էր՝ գործել հայրենիքում: Ամառվա արձակուրդներին նրանք չէին վերադառնում, որովհետև ճանապարհածախսի համար ահագին գումարներ էին հարկավոր, իսկ նրանք աղքատ էին: Ավելորդ է ասել, թե ինչպես ցանկանում էր Սեյրանյանը տեսնվել յուր սիրելիի հետ:

Ընկերը Սեյրանյանից մի տարով առաջ ավարտեց, որովհետև նրանից մի տարիով առաջ էր մտել համալսարան: Ավարտելուն պես նա գնաց յուր հայրենիքը և Սեյրանյանին խոստացավ, որ այնտեղից մինչև նրա ավարտելը, ապրուստի փող կուղարկի, և, որը համաձայն յուր խոստման, կատարում էր ճշտությամբ, բայց իհարկե այնքան, որքան յուր աղքատ միջոցներն էին ներում: Նունեից նույնպես Սեյրանյանը ստանում էր փող:

Հասավ և Սեյրանյանի ավարտելու ժամանակը: Նա վերջնական քննությունը տվավ յուր մասնագիտության մեջ և ստացավ բժշկի դիպլոմը: Ավելորդ է ասել, թե որպիսի ուրախությամբ

պիտի հայտներ այդ և դրա համար յուր շնորհակալությունն յուր երկու բարեկամներին — Նունեին և ընկերոջը Առաջինին նա կամեցավ յուր բերանով հայտնել այդ ուրախ լուրը, իսկ երկրորդին հեռագրեց իսկույն: Նրա ընկերը այդ ժամանակ գտնվում էր մեր հիշած ամառանոցում. նա շատ ուրախացավ Սեյրանյանի ավարտելու լուրը լսելով և անհապաղ ճանապարհածախս ուղարկեց նրան ու խնդրեց, որ Թիֆլիսից անցնելու միջոցին իրեն էլ հանդիպի:

Սեյրանյանը վաղուց էլ այդպես էր մտադիր անելու: Նա ճանապարհ ընկավ և նախքան Թիֆլիս գնալը, նա անցավ ամառանոցի կողմը, որ գտնվում էր յուր ճանապարհի վերա, նրան մեծ ուրախությամբ հանդիպեց ընկերը և խնդրեց նրանից, որ մի քանի օր յուր մոտ մնա, Սեյրանյանը չէր կարող յուր խնամատար-բարեկամի խնդիրը մերժել, թեպետև նա խիստ ցանկանում էր շուտով տեսնվել Նունեի հետ: Նա համաձայնվեցավ երեք օր մնալ նրա մոտ:

Չնայելով, որ Սեյրանյանի ընկերը նորավարտ բժիշկ էր, բայց յուր խելքով, հմտությամբ և չափից դուրս բարի բնավորությամբ մեծ անուն էր հանել ամբողջ ամառանոցում:

Մի օր էր անցել, ինչ Սեյրանյանը ամառանոցումն էր գտնվում: Երեկո էր, հիանալի, սքանչելի երեկո: Ընկերը հիվանդի այցելության էր գնացել, Սեյրանյանը տանը մենակ նստած՝ մտածում էր Նունեի վերա... Ո՜րպիսի անհամբերությամբ նա սպասում էր այդ երկու երկար օրերի վերջանալուն... Որպիսի երջանկությամբ և միևնույն ժամանակ երախտագետ սրտով նա պիտի ընկներ յուր նազելի Նունեի առաջ և անկեղծ սրտից դուրս պիտի բխեր յուր անսահման շնորհակալության հավաստիքը... Նա կարծում էր, որ անցել է արդեն յուր տանջանքների, թշվառության ժամանակը և այնուհետև բախտը նորից պիտի ժպտար նրան... Եվ նա հիշում էր Նունեի խոսքերը. «Այո՜, Գրիգոր, գյուղը քաղցր է... ինչո՞ւ ես էլ գեղջկուհի չեմ ծնված... ես էլ կօգնեի... ես էլ կգործեի... քեզ հետ... միասին»... Սեյրանյանը հիշեց և՛ նրա վերջին խոսքերը, որ ասաց նա հինգ տարի առաջ՝ անջատման րոպեին. «Եթե կենդանի մնացինք, մենք դարձյալ կտեսնվենք և... և... այնուհետև արդեն երջանիկ կլինենք...»:

— Սիրելի՜ս...— ակամայից դուրս թռավ ինքնամոռացության մեջ ընկած Սեյրանյանի բերանից և նույն րոպեին դուռը բացվելով, ներս մտավ մեզ ծանոթ աղախինը: Նա կամենում էր Սեյրանյանի ընկերոջը:

Սեյրանյանը հայտնեց, որ ինքն էլ բժիշկ է և որ յուր ընկերոջ բացակայության պատճառով պատրաստ է ինքը գնալու հիվանդի մոտ: Աղախինը առանց այլևայլության խնդրեց նրան, որ շուտով հետևի իրեն: Սեյրանյանը ծածկեց գլխարկը և դուրս գնաց նրա հետ: Նա ի՞նչ գիտեր, թե այդ րոպեին ո՞ւմ մոտ էր գնում և կամ անողորմ բախտն ի՞նչ էր պատրաստում նրա համար... Նա դողում էր հիվանդի տան սանդուղքներով բարձրանալիս, որովհետև կյանքի մեջ գործելու այդ առաջին փորձը պիտի լիներ: Աղախինը բացեց դուռը, և նա ներս մտավ սենյակը, որտեղ մահճակալի վերա պառկած էր հիվանդ կինը:

Է

Սեյրանյանը խելագարի նման առավ Նունեի ոսկրացած ձեռքը և մոտեցրեց յուր շրթունքներին:

— Նունե՜, Նունե՜... վա՜յ ինձ, այս ի՞նչ դրության մեջ եմ տեսնում ես քեզ...— կրկնում էր նա անդադար հուսահատությամբ:

Նունեն — որովհետև հիվանդն իսկապես նա էր — նշան արավ, որ իրեն վեր կացնեն: Աղախինը, որ ներկա էր այդ տեսարանին և բոլորովին զարմացած նայում էր բժշկին, օգնեց նրան նստելու: Հիվանդը նստեց և մեծ քնքշությամբ, սիրով ու կարոտով նայեց բժշկի ծանոթ աչքերին, և նրա դեմքի վերա դարձյալ մի ժպիտ փայլեց: Հետո նա ձեռքով նշան արավ, որ աղախինն իրենց մենակ թողնի:

Աղախինը մի անգամ էլ զարմացմամբ նայեց բժշկին և դուրս գնաց:

Հիվանդը, աղախնի գնալուց հետո, նշան արավ, որ բժիշկը նստի: Սեյրանյանը մեքենայաբար նստեց մահճակալի մոտ դրված բազկաթոռի վերա և առավ նրա ձեռքը:

— Անգին իմ Նունե՛, հոգիս, ասա, այդ ի՞նչ է քո դրությունը... Մի՞թե իսկապես այդ դու ես, թե ես երազումս եմ միայն քեզ այդպես տեսնում,— խոսեց ողորմելի ձայնով բժիշկը:

— Դու այս չէի՞ք սպասում, չէ՞, Գրիգոր,— ասաց հիվանդը կտրատված ձայնով և հազիվ բառերը արտասանելով:

— Ես մի րոպե, մի վայրկյան անգամ կարծել... երևակայել չէի կարող, որ դու երբևիցե այդ դրության մեջ կարող ես լինել, անգի՛ն իմ Նունե... Դու այդ մասին ինձ ոչինչ չէիր գրում... Իսկ ես նկատում եմ, որ դու վաղուց ի վեր տանջվում ես այդ ցավով... Բայց ինչի՞, ինչի՞ էիր լռում այդ մասին, անգի՛ն իմ Նունե...

Հիվանդը դարձյալ ժպտաց: Նա միշտ նայում էր բժշկի դեմքին:

— Այդ... հետո կիմանաս, Գրիգոր,— ասաց և ձեռքը մեկնելով դեպի սեղանն, ավելացրեց,— այնտեղ թուղթ կա... վերցրու և պահիր... տանը կկարդաս և... ամեն ինչ կիմանաս... գնա, վերցրու:

Սեյրանյանը վեր կացավ, վերցրեց սեղանի վրայից պոստի երկու մեծադիր թերթ, որոնց վերա փոքր-ինչ առաջ գրում էր հիվանդը, և առանց նայելու անգամ նրանց վերա, մեքենայաբար պահեց յուր ծոցում և նստեց դարձյալ յուր առաջվա տեղը: Նա անպատմելի վշտով նայում էր հիվանդի ներս ընկած և հիվանդությունից ավելի մեծացած աչքերին:

— Ես այդ նամակը... պիտի ուղարկեի քեզ,— խոսեց նորից հիվանդը թույլ և շնչարգել ձայնով,— բայց դրան... վերջացնել չկարողացա... Ես այս առաջին անգամ... ուղարկեցի բժշկի հետևից... որպեսզի... նա ինձ մի այնպիսի դեղ տար, որ... ես փոքր-ինչ... ույժ ստանայի... վերջացնեի այդ նամակը և... ուղարկելով քեզ... այնուհետև հանգիստ մեռնեի... Բայց աստված... այնքան ողորմած է... որ անլսելի չթողեց... իմ աղոթքը... նա ուղարկեց քեզ ինձ մոտ... որպեսզի... վերջին անգամ տեսնեի քեզ... Եվ դու... վերջին գրելու խոսքերս... իմ բերանից լսեիր:

Նա հոգնեց և լռեց: Սեյրանյանն անհագ կերպով լսում էր նրան:

Մի րոպե սենյակում լռություն տիրեց, որի միջոցին հիվանդը՝ գլուխը կախ, կարծես մի բան էր մտածում: Հանկարծ նա բարձրացրեց գլուխը և ժպտալով հարցրեց.

— Դու ավարտեցի՞ր, Գրիգոր:

— Այո... բայց ի՞նչ օգուտ... ինչի՞ս է պետք, անգին Նունե:

— Այդ մի ասիր... դու հասար նպատակիդ... ես այժմ երջանիկ եմ... բայց ես ավելի երջանիկ եմ, որ քեզ... այժմ ինձ մոտ եմ տեսնում: Մոտեցիր ինձ, Գրիգորս:— Սեյրանյանը թեքվեց դեպի նա, և հիվանդը յուր թույլ ձեռքերով փաթաթվեց նրա վզովը:— Օ՜, որքան քաղցր է այս, Գրիգորս... Այս մի րոպեն վարձատրություն է իմ սոսկալի տանջանքներիս... Մի կաթիլ արտասուք, Գրիգոր, և ես... ավա՜ղ, շատ երջանիկ կլինեմ:

Սեյրանյանը ոչ թե մի կաթիլ արտասուք թափեց, այլ լալիս էր դառնապես, նա զգում էր, նա հասկանում էր, թե որքան մեծ, դժվար և անտանելի է այդ կորուստը...

— Այժմ ես ավելի քան հավատում եմ, որ դու ինձ դարձյալ սիրում ես, իմ Գրիգոր...— շշնջաց հիվանդը համբուրելով նրա ճակատը և բաց թողնելով նրան:— Բավական է, Գրիգոր... սրբիր արտասուքդ:

Սեյրանյանը սրբեց յուր արտասուքը:

Հիվանդը կամաց ետ ընկավ բարձի վերա և փոքր-ինչ լռությունից հետո, նայելով ուղղակի Սեյրանյանի աչքերին, խոսեց բոլորովին նվազ ձայնով.

— Գրիգոր, ինձ շատ քիչ ժամանակ է մնում ապրելու... գուցե, մի քանի րոպե... Ես քեզանից մի բան պիտի խնդրեմ... հուսով եմ, որ դու կկատարես... դու պե՛տք է կատարես...

— Հրամայի՛ր...

— Լսիր: Երբե՛ք մի հուսահատվիր... ես այդ միշտ քեզ ասել եմ, ասում եմ և այժմս կյանքիս վերջին րոպեներին... Քաջասիրտ եղիր միշտ... իմ մահից հետո ապրի՛ր... հասկանո՞ւմ ես, ապրիր... և ինձ վերա շատ մի՛ մտածիր... մինչև անգամ աշխատիր ինձ մոռանալ... Ախ... այո՛, մոռացիր ինձ, իմ Գրիգոր. որովհետև այդ քեզ համար լավ կլինի... Միևնույն է, մենք միմյանց համար չէինք ծնված... կկատարե՞ս, Գրիգոր:

— Ես կուզեմ քեզ հետ մեռնել...

— Ո՛չ, այդ վատ է, Գրիգոր... դու ինձ չես լսում,— ասաց անբավական ձայնով հիվանդը:— Եթե դու ինձ սիրում ես, իմ խնդիրքս... այդ միակ խնդիրքս մահվան րոպեին չես մերժիլ... Ուրեմն կկատարե՞ս, Գրիգոր:

Բժիշկը լուռ էր: Հիվանդը կրկնեց յուր հարցը:

— Կկատարեմ...— վերջապես կարողացավ արտասանել բժիշկը:

Հիվանդի մեռած դեմքը կենդանացավ.

— Թեպետ ես քեզ հավատում եմ, Գրիգոր, բայց... երդվիր:

Բժիշկը կանգնեց և խոսեց ցավագին, դողդոջուն ձայնով:

— Երդվում եմ այս սուրբ րոպեով, անգի՛ն իմ Նունե, որ ես անպատճառ կկատարեմ... ես ամեն կերպ կաշխատեմ կատարել քո այդ խնդիրքը, թեպետև, ավա՜ղ, ինձ մեծ, շատ մեծ ույժ է հարկավոր դրա համար... Այո՛, ես կապրեմ, ի՛մ Նունե, իմ բարերար, և կապրեմ ո՛չ թե երբևիցե քեզ մոռանալու, այլ միշտ — ամեն րոպե, ամեն վայրկյան քեզ, քո արդար գործերը հիշելու, քո սուրբ անունդ օրհնելու և երախտապարտ, բայց վշտաբեկ, խորտակված սրտով աղոթելու քեզ համար...

— Եվ հայրենիքիդ մեջ գործելու...— կամաց, շատ կամաց ձայնով շշնջաց հիվանդը՝ նայելով անթարթ Սեյրանյանի աչքերի մեջ:— Գյուղի խաղաղության մեջ, այնտե՛ղ... հիշո՞ւմ ես... հիշի՛ր... չմոռանաս... Իսկ ե՞ս... ա՛խ, մարդի՛կ, մարդի՛կ...

Վերջին խոսքերի հետ նրա դեղնած դեմքը մի տեսակ ձգձգվեց, այլանդակվեց, աչքերը փայլեցին մի ինչ-որ սոսկում ազդող փայլով, նա շարժվեց մի քանի անգամ, ձգձգվեց, խռխռացրեց, և աչքերը փակվելով, հանկարծ մնաց անշարժ, կարծես չորացած: Նա մեռավ:

Ը

Կես ժամ հետո Սեյրանյանը նստած էր յուր ընկերոջ սենյակում մենակ և վառված լամպայի լույսով, Նունեի սեղանի վերայից առած թղթերից մինի մեջ կարդում էր հետևյալ տողերը.

«Անգին իմ Գրիգոր.

Դու չես կարող երևակայել, թե այս րոպեիս, երբ սկսում եմ այս նամակս, որպիսի հուզմունքի մեջ է իմ հոգիս, թե որքան դառն է իմ սիրտս, որովհետև ես քեզ պիտի բանամ այն գաղտնիքը կամ

ավելի լավ ասած, այն ցավալի, ամենադառն իրողությունը, որ այսքան ժամանակ ես մեծ ջանքով ծածկում էի քեզանից... Օ՜, Գրիգո՛ր, ների՛ր, ների՛ր ինձ, իմ այդ գիտակցական հանցանքս, մի՛ հանդիմանիր ինձ, որովհետև ինչ որ էլ ես անում էի, բոլորը քո օգտին էր...

Սակայն նախքան իմ այդ գաղտնիքը բանալս, ես աղերսելով քեզ նախազգուշացնում եմ, որ դու փոքր-ինչ ավելի քաջասրտություն ունենաս, որ գլխումդ ոչ մի չար միտք չծնես, որովհետև ես գիտեմ, որ այն՝ ինչ որ այժմ պիտի հայտնեմ քեզ, քեզ համար մահու հարված պիտի լինի... Օ՜, ինչպես կցանկանայի, որ այս նամակը չգրեի, որքան ես ինձ երջանիկ կհամարեի, եթե դու այս մասին ոչինչ չիմանայիր և շարունակեիր քո խաղաղ, հանգիստ կյանքը, բայց մինչև ե՞րբ, անգի՛ն իմ Գրիգո՛ր՝.. չէ՞ որ մի ժամանակ պիտի պարզվի— և այդ ժամանակն ահա՛ հասել է:

Մինչև այժմ, այսինքն այս ամբողջ հինգ, առավելապես այս վերջին տարվա ընթացքում, ես իմ նամակներում քեզ միշտ գրում էի, որ ես ուրախ եմ, որ ես լավ, խաղաղ կյանք եմ վարում, և որ ես անհամբերությամբ քո ուսման ավարտելուն և վերադարձին եմ սպասում, և դու էլ միևնույն կերպ էիր պատասխանում, բայց դու ի՞նչ գիտեիր, ի՞նչ կմտածեիր, անբա՜խտ իմ Գրիգոր, որ իմ քեզ գրածներս լոկ խոսքեր էին, որ ես դրանցով արտահայտում էի իսկական կյանքիս միայն հակապատկերը, որ այդ խոսքերը գրելու ժամանակ, ես ամենադառն արտասուք էի թափում, և իմ սիրտս այդ ժամանակ ամբողջապես թույն էր... Ների՛ր, ների՛ր ինձ, իմ Գրիգոր, մի՞թե դու չես հասկանում, որ երբեք և ոչ մի բանի համար ես չէի կամենալ քո անգութ ճակատագրի հարվածներից նոր ազատված խաղաղ կյանքը նորից վրդովել, նորից թունավորել. ինչ կուզե լիներ, բայց ես կամենում էի, ես ցանկանում էի, որ դու ապրեիր, հասնեիր նպատակիդ... ա՜խ, նպատակիդ... Ես կորած լինելով, չէի կամենում երբեք քո կորստյան պատճառն էլ դառնալ... Օ՜, Գրիգոր, Գրիգոր, գիտե՞ս թե որքան ես նզովել, անիծել եմ (թող ներվի ինձ այդ) այն չարագուշակ րոպեն, երբ առաջին անգամ մենք հանդիպեցանք միմյանց, երբ անողոք ճակատագիրը մոտեցրեց մեզ միմյանց, մոտեցրեց, որպեսզի այնուհետև թափե մեզ վերա յուր բոլոր թույնը...

Սակայն ժամանակ է պարզելու խոսքերս:

Հենց նույն գիշերը, նույն րոպեին, երբ ես քեզանից բաժանվեցա, կարծես մի բան ներսից ինձ ասում էր, որ մենք այլևս չենք տեսնվիլ և եթե տեսնվենք էլ, ո՞վ գիտե, ինչպես և ինչ դրության մեջ... և, ավա՜ղ, այս վերջին տարին միայն համոզվեցա, թե որքան ճշմարիտ էր այդ դառն նախազգացումը:

Դու գնացիր, Գրիգոր, ես մնացի, բայց աստվա՜ծ իմ որպիսի՜ դատարկություն, որպիսի՜ ամայություն էի զգում ես իմ շուրջս այդ ժամանակ, որպե՜ս դառն էր իմ հոգիս, որպե՜ս ծանր էր իմ սիրտս, և որքա՜ն աղի արտասուք էի թափում... Եվ այժմ, երբ նստած մենակ՝ այս տողերս եմ գրում, ես այլևս արտասուք չեմ թափում — նա սպառվել է, ես լալիս եմ միայն սրտով, և իմ արտասուքս խոցված սրտիս անվերջ հառաչանքներն են...

Թողնում եմ չորս տարին և սկսում եմ հինգերորդ տարուց, երբ, ավա՜ղ, ամեն բան արդեն վերջացած էր:

Մի անգամ մեր տունը մի ինչ-որ ինձ անծանոթ պառավ կին եկավ: Հայրս քնից նոր էր արթնացել և յուր մշտական կարմիր գինին անուշ էր անում, մայրս կար էր անում, իսկ ես գիրք էի կարդում: Ես նկատեցի, թե ինչպես ինձ անծանոթ պառավ կինը, որ մի կախարդի էր նմանում, մտնելուն պես ինձ վերա մի քննական հայացք ձգեց: Սովորական բարևից և մի քանի հանելուկային խոսքեր արտասանելուց հետո հայրս դարձավ ինձ և ասաց, որ ես իրենց խոսակցությանը ներկա չգտնվեմ: Ես զարմացա, թե ինչ էր նշանակում այդ նախազգուշությունը, սակայն հնազանդվեցա և դուրս գնացի: Մի, թե երկու ժամից հետո, ե՛ս ննջարանիս լուսամուտից տեսա, թե ինչպես պառավ կինն ու հայրս խոսելով դուրս էին գնում: Ես շտապեցի մորս մոտ՝ հարցնելու նրանից, թե այդ ինչ պառավ կին էր և ինչի՞ չթողեցին ինձ, որ իրենց խոսակցությանը ներկա գտնվեի: Մայրս նստած էր տխուր մտածմունքների մեջ, և երբ ես առաջարկեցի հարցերս, նա նայեց ուղղակի իմ աչքերին և ինձ թվաց, որ նրա այդ տխուր հայացքի մեջ ինչ-որ կարեկցություն կար... Նա ինձ ոչ մի

որոշ պատասխան չտվեց, որից և ես եզրակացրի, որ այդտեղ մի ինչ-որ գաղտնիք կար, և չգիտեմ ինչի՞, բայց իսկույն ևեթ զգացի, որ այդ գաղտնիքն ինձ էր վերաբերում:

Նույն երեկո, երբ արդեն մութն էր, ես կամենում էի մտնել մորս մոտ: Դեռ ես չէի մոտեցել նրա սենյակին, երբ հանկարծ լսեցի հորս ձայնը, որ գոռում էր.

— Ձենդ կտրե՛, թե չէ, աստուծ է վկա, էս սհաթին ևետ բան հոքի կոնիմ քիզ տիղնուտիղդ... Ես քեզ ասում եմ, վուր ինչ ես իմ ուզում— էն պիտի ըլի... Գանա ես էստի իմ օղլուշաղի մինձը չի՞մ, գանա դիփ իմ կամքով չի պիտի ըլի՞... Մտիկ արա, թե մեկ էլ դու ինձ հակառակվիլ իս, թե մեկ էլ խոսք, մե ծպտուն իս հանի, վայ քռ միխկը... Ես էլ դավի չունիմ...

Ես արդեն դռան մոտ էի և ականջ էի դնում: Հայրս լռեց, և ես խուլ հեկեկանքներ լսեցի— մայրս լալիս էր... Ես փշաքաղվեցա և զգացի, որ արտասուքից խեղդվում եմ. ես վազեցի, ներս ընկա ննջարանս և, ամբողջ մարմնով դողալով մտա անկողին:

Օ՜, Գրիգոր, մինչի օրս էլ կարծես իմ անբախտ մորս խուլ հեկեկանքները լսվում են իմ ականջներում, կարծես նրա արտասուքի ամեն մի կաթիլը հրաշեկ գնդակ էր, որի պատճառած անբուժելի վերքը տակավին այրում, կիզում է սիրտս... Թեպետ մորս լաց լինելն այդ առաջին անգամը չէր, թեպետ ես շատ անգամ էի տեսել նրան լուռ արտասուք թափելիս, բայց ո՜չ մի անգամ նրա լացը ինձ վերա այնքան չէր ազդել, որքան այս անգամ... Նա միայն կարող է հասկանալ իմ դրությունս, որ ունի միակ խնամատար, բուռն սիրով սիրող մի մայր և մի բռնակալից էլ ավելի անգութ հայր... Օ՜, անբա՜խտ, թշվա՜ռ իմ մայրիկ, որպես նա լուռ խոնարհությամբ տանում էր այն ծանր լուծը, որ ամենաանգութ կերպով դնում է նրա վզին ամուսինը... ո՜րպիսի մարտիրոսական համբերությամբ նա տանում էր այն անվայել, փողոցային հիշոցները, որ ամեն օր թափում է, և որքա՜ն մեծահոգի, բարի է նա, որ ոչ մի ժամանակ չէ տրտնջում... և շարունակում է նրա հետ ապրել...

Այնուհետև գրեթե ամեն օր, այն ինձ անծանոթ պառավ կինը գալիս էր մեր տուն և առանձնապես խոսում էր հորս հետ, մայրս այլևս նրանց խոսակցության չէր մասնակցում: Բայց թե ի՜նչ բանի վերա էին խոսում նրանք — այդ ոչ մի կերպ չէի կարողանում ես իմանալ, քանի՜-քանի՜ անգամ ես դիմեցի մորս այդ մասին, բայց նա միշտ լռում էր, անորոշ պատասխաններ էր տալիս, և ես ամեն անգամ նկատում էի, որ նրա աչքերը կարմիր և թաց էին...

Նույն շաբաթվա կյուրակի երեկոյան մայրս, որ սովորականից ավելի տխուր էր, ասաց ինձ, որ ես զուգվեմ վանքի մայր եկեղեցին գնալու համար: Ես հնազանդվեցա, հագնվեցա, և գնացինք: Մեզ հետ էր և հայրս, նա ճանապարհին ինձ մի նկատողություն արավ (որը սակայն ինձ շատ զարմացրեց), որ ես գլուխս միշտ բարձր պահեմ:

Մտանք եկեղեցին, ժամերգությունն արդեն վերջացել էր: Ժողովուրդ շատ քիչ կար. մնացածն էլ դառնում էր դեպի տուն: Հենց դռան մոտ, եկեղեցու մեջ ես տեսա այն պառավ կնոջը, որ հաճախ մեր տուն էր գալիս, նրա մոտ կանգնած էր մոտ հիսուն տարեկան, եվրոպական հագուստով մի հաստափոր մարդ: Նրա մարմինն ավելի փքված էր երևում, քան մսալի, իսկ խիստ չեչոտ դեմքը դեղին էր. կարծես մի ախտով վարակված լիներ: Նրա հոնքերի և թերթերունքների մեծ մասը թափված էր. մինչև անգամ գլխի սև մազերը ինձ կասկածելի թվեցան. իսկ բեղերի բացակայությունն ու փոքրիկ, մկան աչքերը նրա դեմքին մի տեսակ հրեշային արտահայտություն էին տալիս: Ես հենց առաջին հայացքից զզվեցի այդ մարդից:

Մեր մտնելուն պես ես նկատեցի, թե ինչպես պառավ կինը ձեռով կամաց հրեց նրան և խորամանկ աչքերով ցույց տվեց ինձ վերա: Հաստափորն իսկույն հառեց ինձ վերա յուր դիվական (ինձ այդպես թվաց) աչքերը: Մենք գնեցինք մոմ, մոտեցանք բեմին, և ես այնտեղ դրված աշտանակներից մեկի վերա վառում էի, երբ հանկարծ, ի՜նչ տեսնեմ, հաստափոր անծանոթը կանգնած է կողքիս. նա էլ մոմ է վառում: Ես նրան տեղ տվի և մտածում էի, թե ինչի՞ այդ պարոնը հենց մեր գալուն էր մնում, որ ինքն էլ մոմ վառի և հենց այն աշտանակի վերա, որի վերա ես էի վառում... Ես նկատեցի, որ նրա փոքրիկ աչքերը ոչ թե մոմ կպցնելուն էին հետևում, այլ հառած էին

իմ դեմքին, ինձ այնպես թվաց, թե նա կարծես կամենում էր ինձ ուտել յուր այդ փոքրիկ աչքերով... Ես սարսափեցի ակամայից և հեռացա շուտով... Մենք դուրս գնացինք եկեղեցուց և դիմեցինք դեպի տուն: Ճանապարհին ես ետ նայեցի և տեսա, որ հաստափորն ու պառավ կինը խոսելով հետևում էին մեզ. հաստափորը աչքը չէր հեռացնում ինձանից: Ես, կարծես բնազդմամբ, հասկացա, որ այդ մարդը մեծ դեր պիտի խաղա իմ ապագա կյանքիս մեջ և, ավա՜ղ, այդպես էլ եղավ...

Հետևյալ կյուրակի օրը մեր տանը մեծ պատրաստություններ էին տեսնում: Ես չէի իմանում, թե այդ ինչի՞ համար է, այդ պատճառով դիմեցի մորս: Մայրս նստած էր շատ տխուր. նրա աչքերը շատ լաց լինելուց ուռել էին բոլորովին: Նա նայեց ինձ. նրա հայացքի մեջ անսահման քնքշություն, սեր և միևնույն ժամանակ կարեկցություն էր նշմարվում: Նա կամենում էր խոսել, բայց ըստ երևույթին չէր կարողանում:

— Մայրիկ, ի՞նչ է պատահել քեզ,— վախեցած հարցրի ես:

Հանկարծ նա վեր կացավ տեղից և ջերմագին գրկելով ինձ ասաց.

— Քեզ այս գիշեր նշանում են, անգին աղջիկս...

Եվ նա սկսեց դառնապես արտասվել:

— Ի՜նչ,— սարսափած կանչեցի ես դուրս պրծնելով նրա գրկից, ես կարծեցի, թե այդ խոսքերի հետ ամբողջ տունը փուլ եկավ գլխիս:

— Հայրդ կամենում է քեզ այս գիշեր նշանել,— կրկնեց մայրս,— և գիտե՞ս ում վերա,— այն մարդու, որ դու անցյալ կյուրակի տեսար եկեղեցում:

Ես այլևս ոչինչ չէի լսում. աչքերս բոլորովին մթնեցին, գլուխս պտտվեց և գրեթե անզգա ընկա բազկաթոռի վերա:

Այնուհետև մինչև մյուս օրն առավոտյան ես ոչինչ չեմ զգացել, թե ինչ է պատահել ինձ նույն գիշերը: Ես մի տեսակ անզգայության մեջ էի: Աչքերս բանալուն պես՝ տեսա մորս նստած անկողնիս մոտ:

— Ինչպե՞ս ես, աղջիկս,— եղավ նրա առաջին հարցը: Ես նայեցի նրան զարմացած:

— Ի՞նչ է պատահել ինձ,— հարցրի ես իմ կողմից:

— Աստված իմ, դու չե՞ս հիշում երեկվա անցքը...

— Ես բոլորովին ոչինչ չեմ հիշում:

— Դու չե՞ս հիշում, որ երեկ գիշեր քեզ արդեն նշանեցին...

Ես կարծեցի, թե հանկարծ սրտումս դաշույն ցցեցին:

— Սուտ է, սուտ է, մայրիկ, դու ինձ խաբում ես... դու ինձ փորձում ես,— աղաղակեցի ես խելագարի նման:

— Օ՜, հազար երանի կլիներ, եթե այդպես լիներ, անգի՜ն աղջիկս,— ասաց մայրս տակավին լաց լինելով:— Բայց ի՞նչ ունիմ քեզ խաբելու, քեզ փորձելու, անբա՜խտ աղջիկ... Դու բոլորովին անզգա էիր, երբ հայրդ հրամայեց, որ քեզ բռնի հագցնեն և ներս տանեն դահլիճը, որտեղ արդեն վաղուց սպասում էր քեզ փեսացուդ: Դու ապուշի նման անձնատուր էիր եղել, մի ընդդիմություն անգամ ցույց չէիր տալիս... Ես խնդրեցի, աղաչեցի հորդ, դառն արտասուքով թրջեցի նրա ոտները,

որպեսզի քեզ հանգիստ թողնեին, որպեսզի նա խղճար քեզ վերա, բայց նա այնքան կատաղած էր, որ քիչ էր մնում ինձ դաշույնով սպաներ, երկյուղից ես լռեցի բոլորովին... Օ՜, անգին, անգին աղջիկս, ի՞նչ չէի տալ, ի՞նչ չէի անիլ, միայն թե կարողանայի ազատել քեզ այդ գազանների ձեռքից, միայն թե...

Արտասուքը խեղդեց նրան բոլորովին, և նա սեղմեց ինձ՝ յուր գրկի մեջ: Ես քարացած լսում էի նրան, բայց դարձյալ չէի հավատում, մի՞թե իսկապես ես կորած էի բոլորովին, մի՞թե իսկապես ինձ նշանել են այն մարդու հետ, որին հենց առաջին հայացքից ատեցի... բայց մի՞թե իսկապես կարող է մի այդպիսի անգթություն գոյություն ունենալ, որ գործ են դրել ինձ վերա:

— Դու դարձյալ ինձ չե՞ս հավատում, աղջիկս,— ասաց մայրս նայելով իմ անմիտ, չռած աչքերիս,— բայց նայի՛ր մատիդ մատանուն, անբա՛խտ աղջիկ:

Իրավ որ մատիս վերա մի թանկագին մատանի տեսա, ես կարծեցի, թե այդ ոչ թե մատանի է, այլ մի թունավոր օձ, որ մատովս էր փաթաթվել: Այն ժամանակ միայն հավատացի, որ մայրս ինձ չի խաբում, և ես իսկույն հանելով մատանին, դեն շպրտեցի:

— Կորցրե՛ք այս... ես երբեք և ոչ ոքի կնության չեմ գնալ,— աղաղակեցի ես հուսահատական արտասուք թափելով: Հանկարծ այդ միջոցին դուռը բացվեցավ, և շեմքի վերա երևաց հայրս: Ես իսկույն նայեցի նրան. նրա դեմքն այն աստիճան կատաղի էր, որ ես ակամայից դողացի և ամուր կպա մորս, որ նույնպես սարսափած հորս վերա հառած ահռելի հայացքից լռել և դողում էր, ինչպես տերև: Մենք այդ րոպեին նմանում էինք վախկոտ գառների, որոնք գայլին տեսնելուն պես՝ կպչում են միմյանց, սպասելով, որ գազանը մոտենա և պատառոտե նրանց... դեռ մի րոպեաչափ լռություն տիրեց, երբ վերջապես հայրս ծանր քայլերով մոտեցավ մորս և ինչ-որ կրակված հայացքով նայելով ուղղակի նրա սարսափից չռած աչքերին, ասաց կամաց, բայց մի այնպիսի ձայնով, որից բոլոր արյունը սառեց մեր երակների մեջ:

— Թե մեկէլ էս էրեխուն գժվեցրիլ իս, վա՛յ քու միխկը... Վերջին անգամն իմ ասում, աստուծ է վկա, խանչալախորով կոնիմ քեզ էն սհաթին և ետ... Ես ցերեմոնիեք չիմ գիդի:

Եվ նա դուրս գնաց:

Օ՜, Գրիգոր, այո՜, ես հաստատ համոզված էի, որ նա անպատճառ կկատարեր յուր խոսքը. խո դու ինքդ տեսել ես, թե մինչի ո՞ր աստիճանի է հասնում նրա կատաղությունը... իրավ որ անբախտ մայրս այնուհետև բերանը չի բացե այդ մասին. երկյուղից նա իրեն միշտ հեռու էր պահում ինձանից, և երբ ես նրան տեսնում էի, նրա աչքերը միշտ ուռած ու կարմիր էին լինում. նա լուռ անօգուտ արտասուք էր թափում ինձ — յուր միակ սիրելի աղջկա համար: Նա ճնշում էր յուր մեջ մայրական սիրո ամենաքնքուշ զգացմունքները: Նա չէր կարողանում, նա չէր համարձակվում ինձ պաշտպանել, նրան արգելում էին, նրան սպառնում էին սոսկալի մահով...

Մի քանի օրից հետո ես իմացա, որ հարսանիքս երկու շաբթից հետո է լինելու: Անգի՜ն Գրիգոր, այժմ քեզ եմ թողնում երևակայել իմ դրությունս... Մինչև այժմ ես իմ զլխովս անցած բոլոր բաները դարձյալ երազ էի համարում, ես հավատալ չէի կամենում, որ հայրս իսկապես այնքան անգութ կգտնվի, որ ինձ այն մարդու ձեռքը կձգե, որի հրեշային պատկերը հիշելիս անգամ բոլոր արյունս սառում էր երակներիս մեջ... Բայց այժմ, այժմ միայն ես համոզվեցա, որ այդ ամենադառն իրողություն էր: Մի՞թե իսկապես ես այն ծերունի — հրեշի կինը պիտի լինեի. մի՞թե իսկապես իմ ծաղիկ հասակս այդպես շուտ, այդպիսի սոսկալի կերպով պիտի թառամեր, և որ ինձ ավելի խելագարության էր հասցնում, մի՞թե իսկապես ես պիտի բաժանվեի քեզանից ընդմիշտ, հավիտյան, անգի՜ն Գրիգոր... Հապա մեր նախագծած ցնորքները, նպատակնե՞րը... Աստված իմ, ի՞նչ անեի, որին դիմեի, որի՞ն աղաչեի, որ ինձ— թշվառիս, անպաշտպանիս ազատեր այդ դրությունից, որ հեռացներ ինձ այն ահարկու վիհից, որի մեջ անդառնալի կամենում էին ինձ գլորել: Ես մենակ էի, ամբողջ աշխարհիս մեջ մենակ...

Մինչև անգամ աստված էլ ինձ չէր լսում... Մի ելք միայն կար, որին ինձ նման թշվառներից շատերը դիմել և դիմում են — դա ինքնասպանությունն է... բայց, օ՜, պակաս սարսափի մեջ չէր գցում ինձ և դա— ինքնասպանությունը... Ես ինչ իրավունք ունեի կյանքիս վերա սպառնալու, մի՞թե ես միայն ի՜նձ էի պատկանում, հապա իմ մա՞յրս, իմ անգին, անբախտ մա՞յրս... ես որ մեռնեի, ի՞նչ պիտի աներ նա, ի՞նչ պիտի լիներ նրա դրությունը... չէ՞ որ ես նրա միակ ուրախությունն էի, չէ՞ որ նա միայն ինձանով էր մխիթարվում, ինձանով ապրում... Իսկ դո՞ւ, դո՞ւ, իմ հոգույս հատոր, Գրիգոր... այնուհետև ես ի՞նչ պատասխանեի քեզ, մորս... աստվա՜ծ իմ, աստված, ես դարձյալ հույս ունեի, հո՜ւյս, որ հայրս ինձ կխղճար, չէ՞ որ ես նրա միակ, միակ զավակն էի, չէ՞ որ նա քար չէր: Եվ այսպես մի օր արտասուք թափելով ես ընկա նրա ոտները, ես համբուրում էի, թրջում էի նրա ոտները, աղերսում էի, որ թողնի յուր մտադրությունը, բայց նա կատաղած ինձ ոտով մի կողմը հրեց և հրամայեց, որ ես այլևս այդպիսի «անամոթություններ» չանեմ... Հանգավ հույսիս վերջին նշույլը: Երևակայիր, Գրիգոր, մի խեղդվող, որի գլուխը փրփրան գետի երեսին հազիվհազ երևում է և որ, հավաքելով յուր վերջին ուժը, կամենում է հասնել ջրի հոսանքի հետ խաղալով գնացող մի փոքրիկ տաշեղին, որի վերա է նա տեսնում յուր փրկության հույսը այդ կատաղի մռնչող գետի ալիքների մեջ, նա մեկնում է յուր ձեռքը դեպի այդ տաշեղը, հանկարծ տաշեղն անհայտանում է նրա աչքերից, և նա կուլ է գնում ջրային գերեզմանի մեջ: Ասա՜, Գրիգոր, ի՞նչ կլինի մի այդպիսի մարդու դրությունը, իսկ իմ դրությունը դրանից էլ սոսկալի էր... կռվել այլևս անհնար էր: Թո՜ղ կատարվի իմ ճակատագիրս — վերջապես վճռեցի ես և անձնատուր եղա:

Ինձ պսակեցին, և ես դարձա նրա կինը, ուրիշ խոսքերով— ինձ թաղեցին կենդանի, և ես շարունակում էի ապրել...

Մի քանի խոսք կասեմ, Գրիգոր, իմ ամուսնուս մասին, որոնցից դու կարող ես երևակայել իմ ներկա դրությունս: Ամուսինս Թիֆլիսի ամենահարուստ վաճառականներից մեկն է, այն վաճառականներից, որոնց դիզած հարստության ամեն մի կոպեկը ամենակեղտոտ միջոցներով է ձեռք բերված, և որոնց աստվածը միայն փողն է: Իմ ամուսինս այնպիսի մարդկանցից է, որոնց ապաստարանը պատանեկությունից սկսած մինչև խորին ծերությունը միշտ և միայն անբարոյականության տեղերն են, անբարոյականության, որի հետքերն անջնջելի կերպով դրոշմվում են նրանց վերա և այն անբուժելի կերպով ազդում է նրանց ֆիզիկական առողջության վերա, և նրանց ախտերով վարակված կյանքը վարակում է և իրենց շրջապատողներին... մի խոսքով իմ ամուսինս այնպիսի մարդկանցից է, Գրիգոր, որոնք ոչ թե մարդ (օ՜, ափսոս է այդ սուրբ անունը), այլ հրեշ միայն պիտի կոչվին... Եվ ես աշխարհիս մեջ ամենաանբախտն, ամենաթշվառը դրա ձեռքն ընկա, դրա, որը մի օրում թունավորեց իմ նորածիլ կյանքս, ինչպես սաստիկ հյուսիսին, որ մի քանի րոպեում չորացնում է մի գեղեցկատեսիլ, նորաբողբոջ ծաղիկ: Այո, մի օրում, Գրիգոր, այդ հրեշն ինձ այն վիհը գլորեց, որից երբեք և ոչ մի կերպ դուրս գալ կարելի չէ... Ահա՜, թե ինչի իմ անբախտ մայրս այնքան դառն, այնքան աղի արտասուք էր թափում ինձ համար. նա ինձ վաղուց կորած էր համարում, որովհետև նա վաղուց արդեն ճանաչում էր այդ հրեշ մարդուն: Նա ավելի լավը կհամարեր արյունախորով տեսներ ինձ ընկած յուր ոտների առաջ, քան այդ մարդու ձեռքին, բայց նա անզոր էր, նրա ձեռքին ոչինչ չկար...

Գուցե այդ ինձ հարցնես, սիրելի Գրիգոր, թե ի՞նչն էր պատճառը, որ հայրս ինձ հենց այդ հրեշ մարդու հետ ամուսնացրեց, մի՞թե նա նրան չէր ճանաչում, նրա կյանքին ծանոթ չէր. եթե ծանոթ չէր, խո մայրս ճանաչում էր, մայրս կնախազգուշացներ նրան, նա ցույց կտար նրան այն կորուստը՝ դեպի որը նա կուրորեն հետևում էր — այո՜, Գրիգոր,— կպատասխանեմ ես քեզ,— նա մորիցս այդ ավելի լավ գիտեր, նա ավելի լավ էր ճանաչում այդ մարդուն և դրա վարած կյանքը, քան մայրս, բայց տես, թե բանն ինչումն է:— Հայրս— ինչպես դու գիտես, սովորություն ունի միշտ կլուբ գնալու, ավելորդ է ասել, թե որքան գումարներ է նա այդտեղ տարել և տարվել... Մի երեկո նա պատահել է այնտեղ իմ ամուսնուն, և երկուսով սկսել են թուղթ խաղալ, այդ գիշեր հորս բոլորովին չէ հաջողվում, և նա սկսել է տանուլ տալ: Նա կատաղությունից սկսում է հետզհետե գումարները ավելացնել: Վերջապես այդ գիշեր նա վեց հազար ռուբլի է տանուլ տվել: Իհարկե, այդ փոքր գումար չէ և հայրս երկար ժամանակ չէ կարողացել թե չէ՝ ուզեցել վճարել: Տեսնելով այդ և կասկածելով, թե միգուցե հայրս այդ ամենևին էլ չի վճարիլ, պարտատերը մի լավ բան է մտածում— այն է՝ փողի տեղ ինձ առնե և այդ բանն այն, ինձ անծանոթ, պառավ կնոջ միջնորդությամբ առաջարկում է հորս, որն յուր կողմից մեծ ուրախությամբ ընդունում է այդ

առաջարկությունը: Հայրս այդտեղ յուր համար երկու մեծ օգուտ է տեսնում — առաջինը, որ յուր վեց հազար պարտքից է ազատվում և երկրորդը— ինձ առանց օժիտի է ամուսնացնում և այդ էլ մի այնպիսի հարուստ մարդու հետ, որպիսին էր իմ ամուսինը: Ես հետո իմացա, որ այդ մարդուն գրեթե ամենքը ճանաչելիս են եղել և ոչ ոք դրան չէ կամեցել աղջիկ տալ, չնայելով, որ ինքն է առաջարկելիս եղել փող: Ես երկար չեմ խոսում, Գրիգոր, ես քեզ եմ թողնում մտածել իմ հոր, իմ հարազատ հոր այդ վարմունքի վերա:

Եվ այսպես ես ծախված էի, կամ ավելի ճիշտն ասած, ես — կենդանի արարածս թղթի մեջ կլուբում տանուլ էի տված և այն էլ իմ հարազատ հոր ձեռքով... Օ՛հ, ես չեմ կարող այլևս մի բան ասել, իմ սրտիցս արյուն է կաթում, իմ վաղուց ցամաքած աչքերիցս արտասուքի կաթիլներ են դուրս ցայտում իբրև բողոք, բայց ո՞ւմը և ո՞ւմ դեմ...

Հասկանալի է, Գրիգոր, որ ես այլևս չէի կարող այն՝ կայտառ, վարդագեղ աղջիկը մնալ, ինչպես առաջ: Իմ ամուսինս հենց առաջին օրից մի այնպիսի ցավ պարգևեց ինձ, որից միայն մահով են ազատվում... Բժիշկները խորհուրդ էին տվել այս ամառը ամառանոցում անցկացնելու, և երբ ես գրում եմ իմ այս տողերը, մենք գտնվում ենք ամառանոցում: Այս նամակը շատ վաղուց է, ինչ սկսել եմ, օրը մի քանի տող հազիվ եմ կարողանում գրել: Այսօր տանը ոչ ոք չկա, ամուսինս և հայրս քաղաքումն են, իսկ մորս, որը մի րոպե անգամ ինձ մենակ չէ թողել, ես հազիվհազ ուղարկում եմ տեղիս հասարակաց այգին զբոսնելու: Բժիշկ ամենևին չեմ ընդունում, ես կամենում եմ շուտով մեռնել, թողնել այս փուչ աշխարհը, որտեղ իմ մանուկ կյանքս այսպես շուտ թունավորեցին, որտեղ իմ ձգտումներով, նպատակներով լի սիրտս ճմլեցին, մեռցրին... Օ՛, այո՛, մահը— այդ կյանքի ալեկոծության նավահանգիստը, այդ ինձ նման թշվառների մենակ փրկության հույսը... Ո՞րպես քաղցր է թվում ինձ... Մեռնե՛լ, հանգստանա՛լ, հանգստանալ ընդմիշտ, հավիտյան... Ահա՛ ես տեսնում եմ այնտեղ մի լուսաճաճանչ հրեշտակ. նա ժպտում է ինձ, նա շշնջում է ինձ. «Բավ է, դու ապրես այդ թունավոր աշխարհում, որտեղ մարդկանց համար ոչինչ սուրբ, ոչինչ նվիրական բան չկա, ե՛կ, ես կթռցնեմ քեզ իմ լուսաճաճանչ թևերիս վերա դեպի երկնքի հավիտենականությունն— այնտեղ, որտեղ միայն խաղաղություն, սուրբ սեր, և անդորրություն է տիրում»... Եվ ահա՛, ես ընկնում եմ դրա գիրկն, և այդ քա՛ղցր է, քա՛ղցր է...»:

. . . . . .

Բժիշկ Սեյրանյանն ապրեց և ապրում է, նա կատարեց յուր երդումը: Նա մինչի յուր վերջին շունչը չի մոռանալ Նունեի հիշատակը, և մինչի օրս էլ նա կատարում է նրա վերջին խոսքը: